6734

059
9-70

059
9-70

2001

Մ. ՁՄՇԿԵԱՆԻ

„ԾՈՑԻ“

# …ԱՑՈՅՑ

1916 թ.



059
Ձ-70

Ա) ԴԻՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՄՈՒՆՔ

Տօնք եկեղեցականք

Յ. 6. 7. և 13. Յունուարի տօնք ...
...ան և Անուանակոչութեան Քրիստ...
Փետ. 14 Տեառնընդառաջ։
...ետ. 18—Ս. Վարդանանց զօրավ...
Մարտի 26—Մուտն ...ի Վիրապն
...էջէրի Լուսաւորչին։
Ապրիլի 7ն Տօն Աւետման։
Զատկական տօներին։
...ւնիսի 11—Ելն ի Վիրապէն Ս. Գրի...
...ւսաւորչին։
Յունիսի 25—Գիւտ Նշխարաց Ս. Գրի...
...րի Լուսաւորչին։
Յունիսի 30—Ս. Թարգմանչացն Ս...
...հակայ և Մեսրոպայ։
...արդավառին Յարեգարձ Ս. Օծման ...
Տ. Գէորգ Ե. Ամ. Հայոց Կաթողիկոսի
Յուլիսի 23—Ս. Առաքելոյն Թադէոսի
Սանդխտոյ կուսին։
Սեպտ. 8—Տօն Ծննդ. Ս. Աստուածածնի
» 24 Անուանակոչութիւն Վ...
Տ. ԳԷՈՐԳ Ե. Ամ. Հայոց Կաթողիկ...
Հոկտ. 8. Ս. Թարգմանչացն մեր...
Նոյ. 21—Ընծայումն Ս. Աստուածածնի
Դեկ. 3—Ս. Առաքելոյն Թադէոսի
...ղ ... դիմաց...
... Գ. Տօն ... Ս. Աստուածածնի

36

# „ԾՈՑԻ"
## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
# ՕՐԱՑՈՅՑ
# 1916

178
375/27

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Աշխատասիրութիւն
ՄՈՒԿԱՐ ...ԵԱՆԻ
Բաժանորդներուն նուէր

Թիֆլիս. Տպարան Տ. Մ. Ռօտինեանց

9442-ՄՆ

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ.

ԳԷՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենա
Հայոց։

—

Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿ
Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Եւ

Ի Պատրիարքութեան Հայոց Կ. Պոլ
Ամենապատիւ Տ. ԶԱՒԷՆ բարձր-արբ
զան արքեպիսկոպոսի։

—



ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՎ-ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅ ԵՒ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱ-ՆԱՏԱՐ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐՔԻ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ

## ՅԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Պատիւ ունիմ տեղեկացնել ի գիտութիւն յարգելի ընթերցողներիդ, որ չնայելով ներկայ—պատերազմական ժամանակիս ամեն բանի թանգութեան և թղթի սով լինելուն, բայց և այնպէս կարողացանք մի կերպ հրատարակել քսան և ինն տարի անընդհատ շարունակ հրատարակւող նաև 1916 թ. այն «Մոգի» օրացոյցը, որի համարակ թղթի վրայ տպագրելու վերաբերութեամբ՝ խնդրում եմ ընթերցողներիդ ներողամտութիւնը։ Ինչ վերաբերում է գնողներին՝ որպէս զի հերթին-ժամանակին շատ ստանան, պէտք է շտապեն օր առաջ պատուէր տալու և ժամանակիս փոստային կարգերից մեզ ազատելու համար, հաշիւը կանխիկ ուղարկելու։

Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան։

## ՎՇՏԱԼԻ ՄԱՅՐԸ

Ցրտաշունչ քամին փչում է դուրսը,
Պատուհաններին սաստիկ զարնելով.
Ու փաթիլ-փաթիլ թափում է ձիւնը,
Ծածկում գետինը սպիտակ սաւանով։

Մի հայ օջախում մէջ կէս գիշերին,
Թէև վշտալից սգով համակուած.
Ամենքը խաղաղ մտած անկողին,
Աչքերը փակած մրափում են քնած։

Խաւար գիշերը պատուհաններից,
Խեղճ ընտանիքին նայում է դրսից.
Ներսից ու դրսից այդ տան բոլորքը,
Տիրել լռութիւն կոխել է մութը։

Միայն անկիւնում յենուած տան պատին
Չի գալի քունը թշուառ մօր աչքին.
Մեծ որդին՝ կռւում է վիրաւորուած,
Միւսն անդամալոյծ անկողին ընկած։

Մէջ ճակատամարտում սպանուել երրորդը,
Իսկ չորրորդ որդին վաղ առաւօտը.

Շտապում հասնելու զօրաբանակը,
Յուսահատ թողնում ամբողջ օջախը.

Ինչ խաղ է խաղում ճակատագիրը,
Ինչ է լինելու իրանց վիճակը.
Ահա ինչ կսկիծ կրծում մօր սիրտը,
Ինչ տեսակ վշտեր պաշարում միտքը.

Արեան արցունքներ աչքերից թափում,
Ստեղծող-Արարչից օգնութիւն հայցում.
Ստացած լուրերին դեռ չի հաւատում,
Եւ այս ամենը երազ համարում:

Սակայն չնայած այսքան վշտերին,
Նա դեռ չի կտրում յոյսն ամենևին,
Որ աշխալոյսը շուտով կբացուի.
Գազանի ձեռքից հայը կազատուի,
Եւ այդ ժամանակ տանջուած հայու-
թիւն,
Կտօնի կերգի սուրբ ազատութիւն:

Մ. Զմշ.

Դեկտ. 3 ին 1914 թ.
Թիֆլիս

## Ա) 1916 Թ. ՀԱՅՈՑ ՏՕՄԱՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գիր տարւոյն է . . . . . ՑՄ.
Վերադիրը . . . . . 6.
Եօթներեակը . . . . . . ԵԶ.
Իննեւտասներեակը . . . 15.
Տանուտէրն . . . . Խեցգետինն.

---

## Բ) ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

Հայոց՝ ըստ բուն Տոմարի Օգոստ. 11-ին
» ըստ Ազարիայի Մարտի 21 »
Լատինաց՝ (ըստ Նոր Տոմ.) Դեկ. 19 »
Ռուսաց՝ Յունուարի 1 »
Մահմեդականաց՝ Յունիսի 10 »
Հրէից՝ Սեպտեմբերի 7 »
Հաբէշաց՝ Օգոստոսի 26 »
Ղպտաց Օգոստոսի 1 »
Նեստորականների Հոկտեմբերի 1 »
Չինաց՝ Փետրվարին (լուսնի առաջին օրը) երբ արեւը դեռ Ջրհոս համաստեղութեան մէջ է գտնվում.

---

## Դ) ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ՅԱՅՏՆԻ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Օր Կաղանդի Ուր. Յունուարի 1-ին.
» ԾՆՆԴԵԱՆ Չորեքշաբթի . 6 »
Միջոց ունիք 26 օր:
Առաջաւորաց Բարեկ. Յունվ. 31 »
ՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Կիր. Փետ. 14 »
Բուն-Բարեկենդան Փետ. 21 »
ՕՐ ԱՒԵՏՄԱՆ Հինգշ. Ապրիլի 7 »
ԶԱՏԻԿ . . . . . Ապրիլի 10 »
Երեւման Ս. Խաչի Մայիսի 8 »
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ » 19 »
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ » 29 »
Բարեկ. Ս. Լուս. պհց. Յունիսի 19 »
Ս. Գրիգոր Լուսաւորիչ » 25 »
Բարեկ. Վարդ. պհց. Յուլիսի 10 »
ՎԱՐԴԱՎԱՌ . . » 17 »
Միջոց ունիք երեք շաբաթ.



Բարեկ Ս. Աստուած. պհց. Օգ. 7 »
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Ածած. » 14 »
Միջոց ունիք երեք շաբաթ.
Բարեկ. Ս. Խաչի Սեպտեմբերի 4 »
ԽԱՉՎԵՐԱՑ. » 11 »
Բարեկ. Վարագայ Ս. Խաչի » 18 »
Վարագայ Ս. Խաչ. » 25 »
Միջոց ունիք 9 շաբաթ.
Գիւտ Խաչ. . . Հոկտեմբ. 23 »
Յիսնակաց Բարեկ. Նոյեմբ. 15 »
Երից ամաց Ընծ. Ս. Ածածնի » 21 »
Ս. Յակոբայ Բարեկ. Դեկտ. 4 »
Յղութիւն Ս. Ածածնի » 9 »
Միջոց ունիք 19 օր.
Բարեկ. Ծննդ. պահոց Հինգշաբթի
Դեկտեմբերի . . . . . . . . 29 »

Հայաստանեայց եկեղեցում պսակի խորհուրդ կատարուելու արգելուած օրերը։

Ամեն լուս-չորեքշաբթի, լուս ուրբաթ և շաբաթ-կիրակնամուտ երեկոներին։

Հինգ Տաղաւարաց մեռելոցներին։

Անուանակոչութեան, Տեառնընդառաջի Աւետման, Ս. Աստուածածնայ Յղութեան, Ծննդեան և Երեք ամաց ընծայեցման տօներին ու նախատօնակներից յետոյ։

Ծննդեան ութօրէից, Զատկական օրերի առաջին շաբաթը, Վարդավառի 3 օրերը, Վերափոխման 10 օրերը և Ս. Խաչի ամբողջ շաբաթը։

Ինչպէս ամբողջ Մեծի պահոց այնպէս և այլ շաբաթական Առաջաւորաց, Հոգեգալստեան, Լուսաւորչի, Վարդավառի։ Վերափոխման, Ս. Խաչի, Յիսնակի, Ս. Յակովբայ և Ծննդեան պահոց ընթացքում *)։

*) Ըստ եկեղեցական կանոնի, օրը հաշւում է արևի մայր մտնելուց։

Ծ. Աշխ.

# ՅՈՒՆՈՒԱՐ

## 31 ՕՐ

Երկիրը բացի իր առանցքի վերայ պտտուելուց պտտում է նաև արևի շուրջը—365 օրում 5 ժ. 48 ր. 51 վայրկեանում։ Եւ այդ ժամանակամիջոցը անուանել են տարի։ Հին ժամանակները այդ շրջանը անուանում էին Կենդանակերպեան կամ Զօդիակոսեան շըրջան։ Երկիրը պտտուելով արևի շուրջը՝ անցնում է 12 համաստեղութիւններ, որոնց անուանել են Կենդանակերպներ. իսկ իւրաքանչիւր համաստեղութիւնը ամիս։ Ջրհոս կենդանակերպ համաստեղութեանը — համապատասխանող Յունուար ամսին, անուանել են Հռովմայեցւոց

չաստուած Յանոսի անունով, որովհետև Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէլիոսը, կարգաւորելով ու լրացնելով Հռոմուլոսի տարուայ ամիսների թիւը, ի պատիւ Յանոսի 12 բաժիններով տաճար հիմնեց և տարուայ առաջին ամիսը ի պատիւ նորա անուանեց Յանուար։ Մեր նախնիքն էլ, ինչպէս ուրիշ ազգեր, նայելով բնութեան երևոյթներին, երկրի սովորութեան, աւանդութեան, նաև մարդկանց զբաղմունքների և պատահած ժամանակին, ամիսներին յարմար անուններ էին տալիս. օրօրինակ՝ տարեգլուխը, ի յիշատակ Ջըրհեղեղի սկսել են Օգոստոս ամսից, Ջրհեղեղի վերջանալու և Նոյեան նաւի—տապանի կանգնած տեղին հասնելու պատճառաւ անուանել են Նաւասարդ, որ է Նաւ-աստ-արդ, (Նաւը-արդէն-այստեղ է կամ նաւը հասել է արդէն)։ Յունուարին անուանել են Արաց՝ Սանսկրիտերէն լեզուով «Նոմ-սարդ» խօսքը կը նշանակէ Նոր-տարի։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել որ Եւրոպայում մինչև 1567 թուականը Մարտ ամսից էին սկսում Նոր-տարին, որովհետև Յունուար ամիսը տարուայ 11-րդ ամիսն էր հաշվւում. իսկ 1567 թ. Ֆրանսիական Կարլոս X-ի հրովարտակով, Նոր տարին—ամանորը Յունուարի մէկից սկսեցին գործածել, որը մինչև այժմ շարունակվում է ամբողջ Եւրոպայում։ Տ. Աշխ.

1 Ուր. ֆէ. 3 օր Ծննդ. պահոց։ Տարեմուտ և կաղանդ։ Ռուսաց Տօն Անուանակոչութեան Տեառն։ 9

2 Շբ. փշ. 4 օր Ծննդեան պահոց։ և Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր Նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին և Աբբա Եփրեմի Խորին Ասորւոյ։ 10

3 ✠ Կիր. փէ. 5. օր Ծննդեան։ 11

4 Բշ. ոշ 6 օր Ծննդեան պահոց։ 12

5 Գշ. ռէ. 7. օր Ծննդ. պահոց։ Ճրագալոյց Ծննդեան։ Նաւակատիք։ Երեկոյեան զկնի պատարագի նախատօնակ (մինչև ամսոյս 14-ն ամեն երեկ. նախատօնակ կատարի)։ Ռուս. Ճրագալոյց Աստուածայայտնութեան։ 73

6 ✠ Դշ բշ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ջրօրհնէք։ Ուտիք է մեզ անմիջոց ութ օր։ Ռուսաց և Յունաց Մկրտութիւն Տեառն։ 14

7 ✠ Եշ. բէ 2. օր Ծննդեան։ Յիշատակ մեռելոց։ Ռուսաց՝ Ս. Յովհաննու Կարապետին։ 15

☽ Լր. լուս. [illegible]

8 Ուր. փշ. 3. օր Ծննդեան։ 16

☉ Արեգակն ՚ի Ջրհոսն 8 ժ. 56 ր. առ.

9 Շբ. փէ. 4. օր Ծննդեան 17

10 ✠ Կիր. փշ. 6. օր Ծննդեան։ 18

11 Բշ. փէ. 5. օր Ծննդեան։ 10

12 Գշ. ոշ. 3. օր Ծննդեան պահոց։ 29

13 ✠ Դշ. ռէ. 7 օր Ծննդեան և ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ։ Երեկոյին նախատօնակ։ 21

14 Եշ. բշ. Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։ 22

15 Ուր. բէ. Պահք։ 23

☾ Վր. քռ. լս. Հողմախառն եղ.

16 Շբ. փշ. Ս. Պետրոսի հայրապետին, Վրաստայ եպիս. և Աբխազմայ սարկաւագին։ 24

17 ✠ Կիր. փէ. Ա. կիր. զկնի Ծննդ. 25

18 Բշ. փշ. Ս. Անտոնի Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ճգնաւորացն 26

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 19 | Գշ. փէ. Ս. Թէոդոսի Թագաւորին և Մյն Եփեսոսի։ | 27 |
| 20 | Դշ. ոյ. Պահք։ | 28 |
| 21 | Եշ. ոէ. Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և Ս. վկայիցն Գօրդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորեսի։ | 29 |
| | ☽ Վն. լս. Առաւօտն ժգ. | |
| 22 | Ուր. թյ. Պահք։ | 1 |
| 23 | Շբ. թէ. Ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրղի։ | 2 |
| 24 | ✱ Կիր. ֆյ. Բ. Կիր. զկնի Ծննդ. | 3 |
| 25 | Բշ. ֆէ. Ս. Ղահանայ Գողթնացւոյն, | 4 |
| 26 | Գշ. փյ. Ս. Եւգենեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի։ | 5 |
| 27 | Դշ. փէ. Պահք։ | 6 |
| 28 | Եշ. ոյ. Ս. վկայիցն Եւգենիոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ։ | 7 |
| 29 | Ուր. ոէ. Պահք։ | 8 |
| | ● Նր. լս. Ջնայն Եւ. | |
| 30 | Շբ. թյ. Ս. Գրիգորի Աստուածաբանին։ | 9 |

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 31 | ✱ Կիր. թէ. Գ Կիր. զկնի Ծննդ. Բարեկենդան Առաջաւորաց պահ. | 10 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 1 ժ. 52 րոպէ։

ՅՈՒՆՈՒԱՐ.—Ջրհոսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համեստ է, բարի, սիրելի, խելացի, ուրախ, հետաքրքիր, կասկածոտ և հանճարեղ՝ որից և օգտուող։ Միակ պակասութիւնը՝ անչափ փառամոլութիւնն է։ Սկզբումը չունեոր, վերջը կարողութեան տէր, միայն այդ ամենն էլ վատնող։ Երեխաներ նաև քիչ ունեցող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաստատակամ է, վեհանձն, անկեղծ, շատ ուրախ և աւելի իր բարեկամութիւնների ետևից ընկ-

նոց։ Իր զուարթ բնաւորութեան շնորհիւ հեշտութեամբ կըտանէ զանազան վշտեր և անյաջողութիւններ, որոնց սպասելու է հէնց ամուսնութեան սկզբից։ Շատ տեղ կըճանապարհորդի և ջահիլ ժամանակ իր քաշած նեղութիւններից մեծ հարստութիւն ձեռք կըբերի, բայց ծերութեան ժամանակ զգուշանալու է, որ անդամալոյծ չդառնայ։

Առհասարակ յունուարին ծընուածները հոկտեմբեր ամսուայ կէսից մինչև նոյեմբերի կէսը հիւանդանալուց զգուշանալու են։ Իսկ իրենց գործերի ամենայաջող ժամանակը դեկտեմբերի 15-ից մինչև յունուարի 15-ն է։

# ՓԵՏՐՈՒԱՐ

## 29 ՕՐ

Օրացոյցը կամ ժամանակի հաշիւը սկսուեցաւ հին ժամանակները յոյներից և հռովմայեցիներից, այդ պատճառով նոր ազգերն էլ մինչև այսօր հին ազգերի գործածած անուններն են գործ դնում։ Այս ամիսն էլ, Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէլիոսը կարգադրեց տարեշրջանի երկրորդ ամիս համարել։ Որովհետև այս ամիսը ընդհանրապէս անձրևոտ էր լինում, ի հնումն նուիրուած էր ի պատիւ ծովի չաստուած Պօսիդոնին, իսկ Ֆեպրէ, իտալերէն նշանակում է տենդը և անձրևներից առաջացած Հռովմի շրջակայքում այս ամսում տեղի ունեցած տենդի համաճարակի պատճառով փետրուարին անուանում էին տենդի ամիս։ Փետրվար ամիսը Հռմա-

Օ **ՓԵՏՐՈՒԱՐ** Լ

պատասխանում է—Ձուկ համաս-
տեղութեանը և վերցրած է Ձեբ
րուայի բառից. Այսպէս անուա-
նում էին հռովմայեցիք զոհաբե-
րութեանը՝ որ տօնօրաբար այս
ամսին էին կատարում. Մեր
նախնիքն էլ երևի հէնց այս
պատճառաւ անուանել են այս
ամսին Մեհեկի (երբեմն Մեհենաց
ամիս).

1 Բշ. փյ. 1. օր Առաջաւ. պահոց. 11
2 Գշ. փէ. 2. օր Առաջ. պահոց. 12
Ե. և Ռ. Տեառնընդառաջ.
3 Դշ. փյ. 3. օր Առաջաւ. պահոց. 13
4 Եշ. փէ. 4. օր Առաջաւ. պահոց. 14
5 Ուր. ոյ. 5 օր Առաջաւ. պահոց. 15
Յիշատակ Յօնաննու մարգարէին.
6 Շբ. ոէ. Ս. Սարգսի զօրավարին 16
և որդւոյ նորա Մարտիրոսի և չո-
րեքտասան զինուորացն.
☾ Լր. լս. Խոյում.
7 ✱ Կիր. բյ. Ե. Կիր զկնի Ծննդեան 17
☼ Արեգ. 'ի Ձուկն 10 ժ. 51 ր.

Օ **ՓԵՏՐՈՒԱՐ** Լ

Օր իջանելոյ ջերմութեան արեւ
լ'օդս.
8 Բշ. բէ. Ս. Ատոմեանց զօրավա- 18
րացն.
9 Գշ. գյ. Ս. Սուքիասեանց վկա- 19
յիցն.
10 Դշ. գէ. Պահք. 20
11 Եշ. դյ. Ս. Ոսկեանց քահանայիցն. 21
12 Ուր. դէ. Պահք. 22
13 Շբ. ոյ. Ս. ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ 23
հայրապետին մերոյ. Երեկ. Նախ.
Վր. քռ. լս. Տեղ տեղ [illegible].
14 ✱ Կիր. ոէ. Բ. Կիր. զկնի Ծննդեան. 24
ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ.
Օր իջանելոյ ջերմութեան արե-
ւու 'ի ջուրս.
15 Բշ. եյ. Ս. Մարկոսի, եպիսկոպո- 25
սին, Գիոնի քհն., Կիւրղի և Բե-
նիամինի սարկաւագացն և Ս.
վկայիցն Աբդլմսեհի, Որմզդանայ
և Սայենի. Երեկ. Նախատօնակ.
16 Գշ. եէ. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ քահ. 26
17 Դշ. զյ. Պահք. Երեկ. Նախատօն. 27

Օ ՓԵՏՐՈՒԱՐ Լ

18 ✠ Եշ. գլ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ զօ- 28
րավարացն մերոց և 1036 վկա-
յեցն, որք անկան 'ի մեծ պատե-
րազմին Աւարայրի։ Տօն ազգային
և Յիշատակ մեռելոց։
19 Ուր. ֆդ. Պահք։ Ց. և Ռ. Բարեկ- 29
եօթնեկի։
20 Շբ. գլ. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյ՝ 30
150 հայրապետացն։ Զկնի երեկո-
յեան ժամասացութեան ծած-
կեսցի սեղանն վարագուրաւ։
Ծն. լուսնի։ Խոնաւ եղ.
21 ✠ Կիր. գլ. Բուն-Բարեկենդան։ 1
Եւս Ց. և Ռուսաց։
Օր իջանելոյ ջերմութեան արե-
ու ի հողն։
22 Բշ. ոյ. 1. օր մեծի պահոց։ 2
23 Գշ. ոլ. 2. օր մեծի պահոց։ 3
24 Դշ. բյ. 3. օր մեծի պահոց։ 4
25 Եշ. բլ. 4. օր մեծի պահոց։ 5
26 Ուր. ֆյ. 5. օր մեծի պահոց։ 6
27 Շբ. գլ. 6 օր մեծի պահոց։ Ս. 7
Թէոդորոսի զօրավարին։ Եւս Ց. և
Ռուսաց։

Ռ ՓԵՏՐՈՒԱՐ Լ

☾ Վր. քռ. լս. Ձիւնբեր եղանակ։
28 ✠ Կիր. գյ. 7. օր. մեծի պահոց։ 8
Բ. Կիր. Քառասնորդ. պահոց։
29 Բշ. գլ. 8. օր մեծի պահոց։ 9

—

Այս ամսուս 1-ից մինչև 28 ը օրն աւելացել է 7 ժ. 2 րոպէ։

ՓԵՏՐՈՒԱՐ.— Ձուկն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան խաղաղամոլ է, համարձակ, դիտուն անպարծ ու զուարթ։ Ջահել ժամանակ չունենար, սակայն հարստանալուց յետոյ շռայլող, վատնող։ Թէև լաւ շրջաններ ունենար, բայց մինչև 40 տարեկան հասակը կանանցից զամբադ։ Եւ իր անընդունակութեան շնորհիւ վնասներ կրելով ինքնէ միայն տուժում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաղուա-

դիւտ գեղեցկուհի է լինում, չաճախ սրտով բարի, խելօք, ընդունակութեանց տէր ու գրական կարծիքներ ունեցող։ Երեխաներ էլ քիչ է ունենում։ Առհասարակ փետրուար ամսում ծնուածները արի են լինում և ծառայութեան մէջ բաղդաւոր, բայց չարամիտ մարդկանցից զգուշանալու են։



# ՄԱՐՏ

31 Օր.

Հռովմայեցոց մէջ Հռոմուլոսի տարուայ առաջին ամիսը Մարտն էր, որ իր անունը ստացել է պատերազմի չաստուած Արամազդի և Հերայի զաւակ Մարսից (Արէս), որը (աւանդութեամբ Հռովմի հիմնադրի) Հռոմուլոսի հայրն էր համարւում. Այսպէս անուանեց Հռոմուլոսը, տարին բաժանելով ամիսների։ Որովհետև Իտալիայում այս ամսումն է սկսւում գարունը, սորա համար հին ժամանակները գարունը ընդունելու համար տօն էին կատարում։ Այդ հանդէսը պսակի և ամուսնութեան տօն էր։ Ամուսնացած կանայք ծաղիկներ էին զոհաբերում հպարտութեան չաստուած Յունոնայի ուխտատեղւոյն, իսկ տղամարդիկ իրենց

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|

կողմից զոհաբերում էին երկ-
դեմեան չաստուած Յանոսին։
Այս տօնը կանանց յաղթու-
թեան հանդէս էր, լի ուրա-
խութեամբ և ցնծութեամբ։ Ո-
րովհետև հին ժամանակները
շատ ազգերի տարին սկսում էր
այս ամսից, որ համարւում
էր արևային տարեշրջանի
սկիզբն, երևի հենց այս պատճա-
ռաւ մեր նախնիքն էլ այս ամ-
սին անուանել են Արեգ։

1 Գշ. այ. 9. օր մեծի պահոց։ 10
2 Դշ. աէ. 10. օր մեծի պահոց։ 11
3 Եշ. բյ. 11. օր մեծի պահոց։ 12
4 Ուր. բէ. 12. օր մեծի պահոց։ 13
5 ✠ Շբ. գյ. 13. օր մեծի պահոց։ 14
Կիւրղի Երուսաղէմայ հայրապե-
տին և միւս Կիւրղի եպիսկոպոսի
և մօրն նորա Աննայի։
6 ✠ Կիր. գէ. 14. օր մեծի պահոց։ 15
Գ. Կիր. Քառասնորդական պա-
հոց.—(Անառակին)։

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|

◐ Լր. լուսնի. Բարեխառն եղ.
7 Բշ. դյ. 15. օր մեծի պահոց։ 16
8 Գշ. դէ. 16. օր մեծի պահոց։ 17
☼ Արեգակն 'ի Խոյն։ 1 ժ. 11
րոպ. ցեր. Գարնանամուտ և հա-
ւասարակած—Տիւ և գիշեր հաւա-
սար։
9 Դշ. այ. 17. օր մեծի պահոց։ 18
10 Եշ. աէ. 18. օր մեծի պահոց։ 19
11 Ուր. բյ. 19. օր մեծի պահոց։ 20
12 Շբ. բէ. 20. օր մեծի պահոց։ Ս. 21
Յովհաննու Երուսաղէմայ հայրա-
պետին և Ս. հայրապետացն մերոց
Յովհաննու Օձնեցւոյն, Յովհան-
նու Որոտնեցւոյն և Գրիգորի Տա-
թևացւոյն։
Լատ. Աւետումն։
Վր. քռ. լս. Հողմախառն եղ.
13 ✠ Կիր. գյ. Դ. Կիր. Քառասնոր- 22
դական պահոց (Տնտեսին)։
14 Բշ. գէ. 22. օր մեծի պահոց։ 23
15 Գշ. դյ 23. օր մեծի պահոց։ 24
16 Դշ. դէ. 24. օր մեծի պահոց։ 25
(Միջինք)։

Օ ՄԱՐՏ Լ

17 Եշ. տյ. 25. օր մեծի պահոց: 26
18 Ուր. տկ. 26. օր մեծի պահոց: 27
19 Շբ. բյ. 27. օր մեծի պահոց: 28
Ս. Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:
20 ✠ Կիր. բկ. 28. օր մեծի պահոց: 29
Ե. Կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին):
21 Բշ. էյ. 29. օր մեծի պահոց: 30
☽ Ծնունդն լուս. Անձրեւոտ եղ.
22 Գշ. ֆկ. 30. օր մեծի պահոց: 1
23 Դշ. փյ. 31. օր մեծի պահոց: 2
24 Եշ. փկ. 32. օր մեծի պահոց: 3
25 Ուր. տյ. 33. օր մեծի պահոց: 4
Յերեկոյին Նախատօնակ:
Յունաց և Ռուսաց Աւետումն:
26 ✠ Շբ. տկ. 34. օր մեծի պահոց: 5
Ս. ԳՐԻԳՈՐԻ մերոյ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:
27 ✠ Կիր. բյ. 35. օր մեծի պահոց: 6
Զ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Գալստեան):

Օ ՄԱՐՏ Լ

28 Բշ. բկ. 36. օր մեծի պահոց: 7
☽ Առ. քռ. լս. Շատ տեղ անձրեւներ: 8
29 Գշ. էյ. 37. օր մեծի պահոց: 9
30 Դշ. էկ. 38. օր մեծի պահոց:
☽ Առ. քռ. լս. Հողմալից եղ. 10
31 Եշ. փյ. 39. օր մեծի պահոց:

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 2 ժ. 10 րոպէ:

ՄԱՐՏ.— Խոյն: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան եռանդոտ, արդարադատ, քաղցրախօս, հետաքրքիր և կրքոտ բնաւորութեան տէր է լինում. ոչ տուած խօսքն է պահում և ոչ խոստումն կատարում.

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը գեղեցիկ է, արդարասէր, քաղցրեղէն սիրով, շատակեր և իր նկատած բաների մասին երկար ու բարակ դա-

տօղութիւններ տուող, այդ պատճառով էլ՝ ատախօս, անխնայ գրպարտող ու շուտ ղայրացող է լինում։

Այս ամսին ծնուածներն առհասարակ առևտրի մէջ յաջողութիւն են ունենում, թէև ժլատ են լինում, միայն հոկտեմբեր ամսից զգուշանալու են։

---

# ԱՊՐԻԼ

## 30 ՕՐ

Ապրիլ ամիսը Հռոմէական տարուայ երկրորդ ամիսն էր։ Որովհետև այս ամիսը գարնան երկրորդ ամիսն էր և օրերը քանի գնում էին տաքանում էին, բնութեան այս գործողութեան պատճառաւ անուանել են Ապրիլ—Aprilis, որ լատիներէն նշանակում է արևային կամ տաքացնող, իսկ Apevire խօսքը լատիներէն նշանակում է բանալ, և որովհետև այս ամսում երկրից ծլում և բացվում են ցանքերը, սերմերն ու տունկերը, այդ պատճառով Հռոմում այս ամսուայ մէջ կատարւում էր ի պատիւ պտղաբերութեան չաստուած Ցերերի փառաւոր տօնը։ Մեծ հանդիսով տանում էին չաստուածների արձանները երեխայքը նժոյգների վերայ նստած և ժողովուրդը ցնծութեան

Օ | ԱՊՐԻԼ | Լ

և ուրախութեան աղաղակներով, իսկ քրմերը ի պատիւ չաստծոյ օգտակ հանդերձներ հագած զոհաբերում էին ամուլ կովեր։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Ահեկի։

1 Ուր. դլ. 40. օր մեծի պահոց։ 11
2 Շբ. ոյ. 41. օր մեծի պահոց։ 12
Յիշատակ Ղազարու Յարութեան։
Ընթեր. Նախատօնակ։
3 ✠ Կիր. ոլ. Պահք։ Է. Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ։ Ընթեր. Դռնբացէք։ 13
Յունաց. և Ռուսաց՝ Ծաղկազարդ։
4 ✠ Աւագ-Երկուշաբթի բդ. Պահք։ 14
5 Աւագ-Երեքշաբթի բլ. Պահք։ 15
Յիշատակ տասն կուսանաց։
● Նր. լս. Տեղ-տեղ ճեղքեր։
6 Աւագ-Չորեքշաբթի գդ. Պահք։ 16
Ընթ. Նախ.
7 ✠ Աւագ-Հինգշաբթի գլ. Պահք։ 17
ՅԻՇԱՏԱԿ ՈՏՆԼՈՒԱՑԻ և ԱԻԽ.
ՏՈՒՄՆ Ս. ԱՂՕԹՈՒԱԾԱԾՆԻ։
8 Աւագ-Ուրբաթ դդ. Պահք։ Յիշ. 18

Չարչարանաց և Խաչելութեան Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
⊗ Արեգ. 'ի Ցուլն մտանէ։
9 Աւագ-Շաբաթ դլ. ճրագալոյց 19
Ս. Յարութեան։ Նաւակատիք։ Երեկոյեան զկնի պատարագի Նախատօնակ։
10 ✠ Կիր. ոյ. ԶԱՏԻԿ։ (Ս. Յարութիւն Քրիստոսի)։ Ուտիք է մեզ անմիջոց յճաշարգելուն։ Ընթեր. Նախատօնակ։ Նաև Յունաց և Ռուսաց Զատիկ, որոց ուտիք է ցնոր Կիրակէ. Ընթեր. Նախատ. 20
11 ✠ Բշ. ոլ. 2. օր Զատկի։ Յիշատակ Մեռելոց։ 21
12 ✠ Գշ. բդ. 3. օր Զատկի։ 22
☽ Վր. քռ. լս. Գոլորշանալի եղ.
13 Դշ. բլ. 4. օր Զատկի։ 23
14 Եշ. գդ. 5. օր Զատկի։ 24
15 Ուր. գլ. 6. օր Զատկի։ 25
16 Շբ. դդ. 7. օր Զատկի։ Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի։ 26
17 ✠ Կիր. դլ. 8. օր Զատկի։ Բ. Կիր. Նոր-Կիրակէ. – (Կրկնազատիկ)։ 27

Օ | Ա Պ Ր Ի Լ | Լ

18 Բշ. տյ. 9. օր Ցինանց։ 28
19 Գշ. տէ. 10. օր Ցինանց։ 29
Ը. Ծն. քռ. լս. Փաֆօխտյօնեղ.
20 Դշ. թյ. 11 օր Ցինանց։ 1
21 Եշ. թէ. 12. օր Ցինանց։ 2
22 Ուր. փյ. 13 օր Ցինանց։ 3
23 Շբ. փէ. 14. օր Ցինանց։ 4
24 ✠ Կիր. պյ. 15 օր Ցինանց։ Աշխարհամատրան Կիւրակէ—(Կանաչ Կի. րակէ)։ 5
25 Բշ. պէ. 16 օր Ցինանց։ 6
26 Գշ. տյ. 17. օր Ցինանց։ 7
27 Դշ. տէ. 18. օր Ցինանց։ 8
Ծ Ա». քռ. լս. Անյքեծնէբ։
28 Եշ. թյ. 19. օր Ցինանց։ 9
29 Ուր. թէ. 20. օր Ցինանց։ 10
30 Շբ. փյ. 21. օր Ցինանց։ 11

—

Այս ամսուայ մէկից մինչև 30-ը օրն աւելացել է 1 ժ. 4 րոպէ։

ԱՊՐԻԼ.—Ցուլն։ Այս համաստե-

ղութեան տակ ծնուած տղան աներկիւղ է, կտրուկ, զայրացկոտ, խստասիրտ և իւր թշնամիներին հալածող։ Թէև ունեւոր բայց ժլատ. բաղդաւորութեամբ կըփայլի և դրան նպաստող դէպքերը իւր ցանկութիւնները կըկատարեն։ Շատ էլ կըճանապարհորդի։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը բնաւորութեամբ ուժեղ, եռանդոտ, աշխոյժավ և թէև բնութեամբ անժուժկալ, միայն իւրև ամուսին խոնարհ և հաւատարիմ կըլինի, եթէ իւր և իւր ամուսնու բնաւորութիւններն իրար համապատասխանեն։

Ապրիլ ամսին ծնուածներն առհասարակ աչքերի ուռոյցքից զգուշանալու են։ Իրենց կեանքը երկու մասի կըբաժանուի. առաջին մասը շատ վտանգալից կանցնի և կըտևի մինչև 33 տարեկան հասակը.

—

# ՄԱՅԻՍ

31 ՕՐ

Մայիս ամիսը, ի հնումն նուիրուած էր, ի պատիւ Արամազդ չաստուածոյ համանիշ Մայեա դիցուհուն և ինչպէս կարծում են, առացել է իւր անունը լատինական majores բառից, որ նշանակում է «նախնիք»։ Որովհետև այս ամիսը գարնան վերջին ամիսն էր, սորա համար ընծայած էր ծերոց և նախնեացը, և այդ պատճառով արգելուած էր այս ամսին ամուսնանալը։ Մայիսը գարնանային ամիս լինելով և ամենուրէք այգի ու պարտէզ, դաշտ ու հանդ, ծաղկով, վարդով փթթած լինելու պատճառով զանազան ազգերի մէջ տօնվում էր գարնանային հանդէսներով, որի մէջ մեծ դեր էին խաղում պատանիք և աղջկունք, ծաղկունք ու կանաչ

| Օ | ՄԱՅԻՍ | Լ |
|---|---|---|
| | ճիւղեր։ Մեր նախնիք անուանել են այս ամիսը Մարերի։ | |
| 1 | * Կիր. ԺԱ. 22 օր Յինանց։ | 12 |
| | Դ. Կիր (Կարմիր-Կիրակէ)։ | |
| 2 | Բշ. ԺԲ. 23. օր Յինանց։ | 13 |
| 3 | Գշ. ԺԳ. 24. օր Յինանց։ | 14 |
| 4 | Դշ. ԺԴ. 25. օր Յինանց։ | 15 |
| | ● Նր. լուսնի։ [illegible] եղ. | |
| 5 | Եշ. ԺԵ. 26. օր Յինանց։ | 16 |
| 6 | Ուր. ԺԶ. 27 օր Յինանց։ | 17 |
| 7 | Շբ. ԺԷ. 28. օր Յինանց։ | 18 |
| 8 | * Կիր. ԺԸ. Ե. Կիր. 29 օր Յինանց։ | 19 |
| | Տօն Երևման Ս. Խաչի։ | |
| 9 | Բշ. ԺԹ. 30. օր Յինանց։ | 20 |
| | Ռ. Տօն Փոխադրութեան նշխարաց Ս. Նիկողայոսի Սքանչելագ. | |
| | ☼ Արեգ. ՚ի Երկուորն մտանէ։ | |
| 10 | Գշ. Ի. 31. օր Յինանց։ | 21 |
| 11 | Դշ. ԻԱ. 32. օր Յինանց։ | 22 |
| | ☾ Վր. քա. լս. Փ... եղ. | |
| 12 | Եշ. ԻԲ. 33. օր Յինանց։ | 23 |
| 13 | Ուր. ԻԳ. 34. օր Յինանց։ | 24 |
| 14 | Շբ. ԻԴ. 35. օր Յինանց։ | 25 |

15 ✠ Կիր. բյ. 36. օր Ցինանց։ 26
Զ. Կիրակի։
16 Բշ. գյ. 37. օր Ցինանց։ 27
17 Գշ. գի. 38. օր Ցինանց։ 28
18 Դշ. դյ 39. օր Ցինանց. 29
19 ✠ Եշ. դի. 40. օր Ցինանց։ 30
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ. (Վիճակ)։ Ըստ Լատ. Յ. և Ռուսաց։
☽ Ծն. լուսնի. Վճիռ եղ.
20 Ուր. այ. 41. օր Ցինանց։ Պահք։ 1
21 Շբ. ալ. 42. օր Ցինանց։ 2
22 ✠ Կիր. բյ. 43 օր. Ցինանց: 3
23 Բշ. բի. 44. օր Ցինանց։ 4
24 Գշ. գյ. 45. օր Ցինանց։ 5
25 Դշ. գի. 46. օր Ցինանց։ Պահք. 6
26 Եշ. դյ. 47. օր Ցինանց։ 7
27 Ուր. դի. 48. օր Ցինանց։ Պահք. 8
☽ Առ. քա. լս. Առաջնորդ եղ.
28 Շբ. այ. 49. օր Ցինանց։ 9
29 ✠ Կիր. ալ. Ցինեերորդ օր ՚ի 10
Զատկէն։ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ)։ Բարեկենդան Եղիական պահոց։ Ռուսաց և Յունաց Եւս Պենտեկոստէ։



30 Բշ. բյ. 2. օր Հոգեգալ. Պահք։ 11
Ռուսաց՝ Երկրորդ օր Հոգեգալստ.
31 Գշ. գի. 3. օր Հոգեգ. Պահք։ 12

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 17 րոպէ.

ՄԱՅԻՍ.—Եկաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան ինչպէս արտաքուստ գեղեցիկ է, այնպէս էլ ներքուստ հոգով բարի, խելօք, շրջանկատ, մեծահոգի և մտամբ կասկածոտ, ճարպիկ, խորամանկ և ազատ արհեստների սիրահար։ Այդպիսիների սիրտը կարծես սիրոյ և բարեկամութեան համար է ստեղծուած. Նա բաղդաւոր են լինում, եթէ իրենց կեանքը կապում են այնպիսի կնոջ կամ բարեկամի հետ, որոնք նոյնպէս նոյն հա-

մատեղութեան տակ են ծնուած։

Իսկ ծնուած աղջիկը լինում է գեղեցիկ, բարի, պարզ և հեզ։ Իրենից տարիքով փոքր մարդու հետ բախտաւորութիւն չի գտնիլ, բացի իր նման բնաւորութիւն ունեցող պատուական ամուսնուց։

Մայիսին ծնուածներն առհասարակ, մարդ թէ կին, գիտութեանց սիրահար են լինում, գործերի մէջ հմուտ, բնաւորութեամբ դիւրաթեք և փափկամարմին։ Իսկ 31 տարեկան հասակում զգոյշ պէտք է լինեն հիւանդանալուց։

---

# ՅՈՒՆԻՍ

## 30 ՕՐ

Յունիս (լատին. Iunius) ամիսը Հռովմայեցւոց մէջ ի պատիւ պատանեաց նուիրուած էր հպարտութեան չաստուածուհուն—Սատուռնոսի դուստր Յունոնային (Հերա), որից և առացել է իր անունը։ Բացի դրանից juniores բառը լատիներէն նշանակում է «երիտասարդութիւն» երևի իբր տարուայ բնութեան երիտասարդ եղանակի յիշատակ. ամառուայ առաջին և Հռոմուլոսի կարգած չորրորդ ամիսն էր։ Այս ամսին մեր նախնիքն անուանում էին Մարգաց։ Երևի մարգագետիններ հնձելու ամիս, ինչպէս հայոց դրացի վրացիք այժմ էլ անուանում են այս ամսին Թիբաթվէ, որ կը նշանակէ խոտ հնձելու ամիս։

Օ ՅՈՒՆԻՍ Ն

1 Դշ. ԹԶ. 4. օր Հոգեգ. Պահք։ 13
2 Եշ. ԺԷ. 5. օր Հոգեգ. Պահք։ 14
3 Ուր. ՓԶ. 6. օր Հոգեգ. Պահք։ 15
● Լր լս. Շաբթ։
4 Շբ. ՓԷ. 7. օր Հոգեգալստեան։ 16
5 ✠ Կիր. ԹԶ. Ա. Կիր. Յարութեան։ Յիշատակ Եղիայի Մարգարէին. Յեր. Նախատօնակ։ 17
6 Բշ. ԹԷ. Ս. կուսանացն Հռիփսիմեանց։ Յերեկ. Նախատօնակ։ 18
7 Գշ ԲԶ. Ս. կուսանացն Գայանեանց։ 19
8 Դշ. ՔԷ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ 20
9 Եշ ՓԶ. Ա. Յովհաննու Կարապետին և Աթանագինէ եպիսկոպ. 21
☼ Դրեգ 'ի Խեցգետինն մտանէ 6 Ժ. 28 Ր. երեկ. Ամառնամուտ և արևադարձ. ցերեկն սկսանի կարճանալ—գիշերն երկարել։
☾ Վր. քռ. լուս. Առաւօտ եզ
10 Ուր. ՓԷ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ 22

Օ ՅՈՒՆԻՍ Ն

11 ✠ Շբ. ՓԶ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ—Ելն 'ի Վիրապէն։ 23
12 ✠ Կիր. ՓԷ. Բ. Կիր. զկնի Հոգեգ. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ։ (Կատարի Հանդէս յամենայն եկեղեցիս Հայաստանեայց)։ 24
13 Բշ. ԹԶ. Ս. Մցն. Բեթղեհէմի, Ակակիոսի վկայէն, Մովսէմայ քահանային և Կոնտրատոսի զինուորին։ 25
14 Գշ. ԹԷ. Ս. կուսանացն Նունեայ և Մանեայ։ 26
27
15 Դշ. ԲԶ. Պահք։
16 Եշ. ՔԷ. Ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և Ս. վկայիցն Սարգսի և Բագոսի։ 28
29
17 Ուր. ՓԶ. Պահք։
● Ծնունդ լս. Տեղ տեղ անձրև։
18 Շբ. ՓԷ. Ս. ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻ հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին։ 1
19 ✠ Կիր. ԹԶ. Գ. Կիր զկնի Հո- 2

դեպ. Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։
20 Բշ. գէ. Պահք։ Ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ Հայրապ. և 3 աշակերտացն նորին։ 3
21 Գշ. ադ. Պահք։ Ս. Կոստանդիանոսի Թագաւորին և մօրն նորա Հեղինէի։ 4
22 Դշ. աէ. Պահք։ 5
23 Եշ. ըդ. Պահք։ Ս. Թէոդիտոսի Գաղատացւոյն, Թաղէլէայ բժշկին և 7 կուսանացն, որք 'ի յԱնկիւրեայ կատարեցան։ 6
24 Ուր. թէ. Պահք։ Յերեկոյեան նախատօնակ։ 7
☽ Առ. քա. լս. Տօն եղ.
25 ✠ Շբ. գդ. Գիւտ Նշխարացն Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ։ 8
26 ✠ Կիր. գզ. Դ. Կիր. զկնի Հոգեգալստեան։ 9
27 Բշ. գդ. Ս. վկայիցն Անտոնեայ, Թէոփիլոսի, Անիկիտոսի և Փոտինոսի։ 10

Օ ՅՈՒՆԻՍ Ն

28 Գշ. գէ. Ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն-Սեդրակայ, Միսակայ և Աբեդնագովի։ 11
29 Դշ. ադ. Պահք։ Յերեկոյեան նախատօնակ։ 12
Յ. և Ռուսաց Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։
30 ✱ Եշ. աէ. Սրբոց Թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ։ 13

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ. 24 րոպէ։

ՅՈՒՆԻՍ.—Խեցգետինն։ Այս համաստեղութեան տակ ծնուածը լինում է վճռական, կամակոր, խորամանկ, մոլի և ամեն դէպքում աւելի իր ինքնահաճոյքին և ցնորքներին հետևող՝ քան առողջ դատողութեանը լսող։

Իսկ այս համաստեղութեան

տակ ծնուած աղջիկն ինքնասէր է գործունեայ, աշխատասէր, զգոյշ, արթուն, ամօթխած, հետաքրքիր, ինքնահաւան և մի քիչ տատախոս։

Յունիսին ծնուածներն առհասարակ աչքի են ընկնում իրենց ուշիմ և սրամիտ բնաւորութեամբ։ Ուրիշի անխոհականութիւնից հարստացող են և նշանաւոր մարդկանցից պաշտպանութիւն գտնող։ Գինուց միայն զգուշանալու են.

---

## ՅՈՒԼԻՍ

### 31 ՕՐ

Յուլիսը Հռոմուլոսի կարգադրած տարուայ ամառուայ երկրորդ ամիսն էր և համարւում էր — Հռոմուլոսեան — տարեշրջանի հինգերրորդ ամիսը։ Թէև այս ամիսը—Հռոմայ Գրիգոր VII պապի ժամանակ կազմեցին Գրիգորեան համարուած տոմարով, բայց այս Յուլիս—այսինքն լատ. Iulius ամիսը—իր անունը ստացել է Հռոմայեցւոց նշանաւոր կայսր Յուլիանոս Կեսարից, որը ծնուել է սոյն ամսուայ 4-ին։ Մարկոս Անտոնիոս եռապետը այդ ժամանակ ի պատիւ Նրա այս ամիսը, Յուլիս անուանեց և Նրա հրամանով էլ ուղղելով օրացոյցը—Յուլեան տարեշրջան անուանեցին։ Մեր Նախնիք այս ամսին անուանել են Հրատից (երեւի հուր արձակող

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|

կամ հրային, որովհետև տաքության ամենաշոգ ամիսն է)։ Իսկ վրացիք անուանում են Մկաթաթվէ, որ նշանակում է հնձելու ամիս.

1 Ուր. բյ. Պահք։ 14

2 Շբ. բյ. Ս. Տրդատայ Թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովադխտոյն։ Յեր. Նախատ. 15

☾ Լրումն լուսնի։ Տօթալից եղ.

3 * Կիր. ֆյ. Ե. Կիր. զկնի Հոգ. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի։ 16

4 Բշ. ֆյ. Ս. Կալիստրատոսի և 49 վկայիցն և Ղուկիանոսի քահն. 17

5 Գշ. ֆյ. Ս. Զաքարիայի մարգարէին։ 18

6 Դշ. ֆյ. Պահք։ 19

7 Եշ. ջյ. Ս. Եղիսէի Մարգարէին։ 20

8 Ուր. ջյ. Պահք։ 21

9 Շբ. բյ. Ս. Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի և Ս. Պօղոսի Երեքտասան Առաքելոյն։ 22

☾ Վր. քառ. լս. Տեղ տեղ խոչխոփ։

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|

10 * Կիր. բյ. Զ. Կիր. զկնի Հոգեգ. Բարեկենդ. Վարդավառի պահոց։ 23

11 Բշ. ֆյ. 1. օր Վարդավ. պահոց։ 24

☼ Արեգակն 'ի Առիւծն։ մտանէ 5 ժ. 35 րոպ. առաւ.

12 Գշ. ֆյ. 2. օր Վարդավ. պահոց։ 25

13 Դշ. ֆյ. 3. օր Վարդավ. պահոց։ 26

14 Եշ. ֆյ. 4. օր Վարդավ. պահոց։ 27

15 Ուր. ջյ. 5. օր Վարդավ. պահոց։ 28

16 Շբ. ջյ. ՅԻՇԱՏԱԿ ՏԱՊԱՆԱԿԻՆ ՀՆՈՅ Ե ՏՕՆ ՆՈՐՈՅՍ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ։ Նաւակատիկ։ 29

17 * Կիր. բյ. ՎԱՐԴԱՎԱՌ։ Մեծահանդէս օր ուխտի Մշոյ Ս. Կարապետ վանքի և Տփխիսոյ Ս. Կարապետ եկեղեցւոյն։ Միջոց ուտիք երեք շաբաթ։ 30

Ծն. լս. Սաստիկ շոգեր։

18 * Բշ. բյ. Զ օր Վարդավառի. Յիշատակ մեռելոց։ Մեծահանդէս օր ուխտի Ծիրանաւորի Ս. Աստուածածին եկեղեցւոյն Տփխիսոյ (Կրծանիսի)։ 1

Օ ՅՈՒԼԻՍ Լ

19 Գշ. ֆյ. 3. օր Վարդավառի: 2
20 Դշ. ֆէ. Պահք: 3
21 Եշ. փյ. Ս. Եսայեայ մարգարէին: 4
22 Ուր. փէ. Պահք: Երեկ. Նախատ. 5
Ռուսաց՝ Ս. Մարիամու Մագդաղենացւոյն:
23 ✠ Շբ. տյ. Ս. ԹԱԴԷՈՍԻ Առաքելոյն և Ս. Սանդխտոյ կուսին: 6
24 ✠ Կիր. տէ. Բ. Կիր. զկնի Վարդավառի: 7

Առ. քռ. լս. Տեղ տեղ ձեղեր:

25 Բշ. բյ. Ս. Կիպրիանոսի եպիսկոպոսին և 45 վկայիցն և Ս. կուսանացն Յուստինեայ, Եփիմեայ և Քրիստինեայ: 8

☽ Առ. քռ. լս. Տաք եղ.

26 Գշ. ֆէ. Ս. Աթանագինեայ եպիսկոպոսին և տասն աշակերտացն և հինգ վկայիցն: 9
27 Դշ. ֆյ. Պահք: 10
28 Եշ. ֆէ. Ս. Նախահարցն Ադամայ, Աբէլի, Սեթայ, Ենովքայ, Ենովսայ, Նոյի՝ Մելքիսեդեկի, 11

Օ ՅՈՒԼԻՍ Լ

Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի: Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նախահարցն:
29 Ուր. փյ. Պահք: 12
30 Շբ. փէ. Ս. որդւոց և թոռանց 13
Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:
31 ✠ Կիր. տյ. Գ. կիր. զկնի Վարդավառի: 14

⊕ Լր. լուսնի. Տաք եղ.

—

Այս ամսույ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 1 ժ. 26 րոպէ:

ՅՈՒԼԻՍ.—Առիւծն: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան լինում է պարզասիրտ, համարձակ, քաջ, առատաձեռն, ազա-

տամիտ, մեծահոգի և շատ անգամ հպարտ. իր ազնիւ հոգովը (բնաւորութեամբ) հակուած է դէպի բարեպաշտութիւն և ցաւակցութիւն։ Միևնոյն ժամանակ ծաղրասէր է, ուրիշներին զայրացնող ու կռւող։ Արտաքին գեղեցկութեան շնորհիւ, փափուկ սեռին հաճոյանալու կերպը գիտէ և երկար փաղաքշանքներ շռայլելուց յետոյ հասնում է իր նպատակին։

Իսկ ծնուած աղջիկը զուարթ է, շնորհալի, բարկացող, համարձակ, չարամիտ, վրիժառու, բայց սիրելի և իր սիրելիին անչափ մեծարող։

Յուլիսին ծնուածների ամենաբախտաւոր ժամանակն իրենց հասակի միջին տարիքն է և ամենայաջող ամիսն՝ օգոստոսը։ Ամենից վտանգաւոր տարին իրենց հասակի՝ 42-րդ տարին է, որ այդ ժամանակ պէտք է զգուշանալ։

# ՕԳՈՍՏՈՍ

## 31 ՕՐ

Օգոստոս ամիսը Հռոմայեցիք սկզբում անուանել էին Սեկստիլէ, որ լատ. նշանակում է վեցերորդ։ Քրիստոսից 33 տարի առաջ, ի պատիւ Հռովմայեցւոց Օգոստոս կայսեր այս ամսուան մէջ տարած նշանաւոր յաղթութիւններու պատճառով անուանեցին Օգոստոս, և էր ամառուայ վերջին ամիսը։ Մեր նախնիք այդ ամսին անուանում էին Նաւասարդ, որովհետև նոր տարուայ առաջին ամիսն էր և տարեթիւը այս ամսուայ 11-ից էին սկսում ի յիշատակ Ջրհեղեղի վերջանալուն։ Նաւասարդ, նշանակում է նաւը-աստ-է-արդ, կամ նաւը հաստ. արդ։ Սանսկրիտերէն նովարդ նոր տարի է նշանակում։

Օ **ՕԳՈՍՏՈՍ** Ն

1 Բշ. աչ. Ս. Մակաբայեցւոցն, Եղիազարու քահանային, Շամունեայ և եօթն որդւոց նորին: 15
2 Գշ ջյ. Ս. երկոտասանից մարգարէիցն, Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգէեայ, Զաքարիայ և Մաղաքիայ: 16
3 Դշ. բկ. Պահք: 17
4 Եշ. գյ. Ս. Սոփիա և երից դստերացն, Պիստոսի, Եղպիսի և Ագապի: 18
5 Ուր. ցկ. Պահք: 19
6 Շբ. փյ. Եփեսոսի Ս. Ժողովոյն Երկու հարիւր հայրապետացն: 20
Ց. և Ռուսաց Վարդավառ:
7 ✠ Կիր. փկ Զ. Կիր. զկնի Վարդ. Բարեկեն. Ս. Աստուած. պահոց: 21
Վր. քռ. լս. Մերձ եգ.
8 Բշ. ոյ. 1. օր Ս. Ածած. պահոց: 22
9 Գշ ոկ. 2. օր Ս. Ածած. պահոց: 23
10 Դշ. բյ. 3. օր Ս. Ածած. պահոց: 24

Օ **ՕԳՈՍՏՈՍ** Ն

11 Եշ. բկ. 4. օր Ս. Ածած. պահոց: 25
Ըստ տոմարի մերում նաւասարդ և տարեմուտ ՌՅԾԲ ևկեղ. և 4404 թ. Բուն Տոմարի:
☼ Արեգակն 'ի Կոյսն մտանէ:
12 Ուր. գյ. 5. օր Ս. Ածած. պահոց: 26
13 Շբ. ցկ. Տօն Շողակաթի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ըստ տեսլեան Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Նաւակատիք: Յերեկոյին նախատօնակ: 27
14 * Կիր. փյ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստուածածնի. Զկնի պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ: ԻՆՆ օր նախատօնակ: Մինչ ուտիք երեք շաբաթ: 28
15 * Բշ. փկ. 2. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց: 29
Ց. և Ռուսաց' Վերափոխումն Ս. Աստուածածնայ:
☽ Ծն. լս. Կէսգիշերէն եգ.
16 Գշ. ոյ. 3. օր Վերափոխման: 30
17 Դշ ոկ. 4. օր Վերափ. Պահք: 1
18 Եշ. բյ. 5. օր Վերափոխման: 2

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| 19 | Ուր. բյ. 6. օր Վերափ. Պահք։ | 3 |
| 20 | Շբ. գյ. 7. օր Վերափոխման։ | 4 |
| 21 | * Կիր. գէ. 8. օր Վերափոխման | 5 |
| 22 | Բշ. դյ. 9. օր Վերափոխման։ | 6 |
| 23 | Գշ. դէ. Ս. Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստուածածնի և կանանցն Իւղաբերից։ ☽ Առ. քռ. լս. Բոցխորոն ու. | 7 |
| 24 | Դշ. եյ. Պահք։ | 8 |
| 25 | Եշ. եէ. Ս. Երեմեայ մարգարէին | 9 |
| 26 | Ուր. բյ. Պահք։ Լատ. Ծնունդ Ս. Աստուածածնի։ | 10 |
| 27 | Շբ. բէ. Ս. Առաքելոյն Թովմայի։ Յակոբայ և Շմաւոնի։ Ցերեկոյին Նախատօնակ։ | 11 |
| 28 | * Կիր. գյ. Դ. Կիր. զկնի Վերափ. Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի։ | 12 |
| 29 | Բշ. գէ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և Ս. վկայիցն Գոհարինեայ, Ծամիդէսի, Տուքիկոսի և Ռոտիկոսի։ Ց. և Ռուս. Գլխատումն Ս. Յովհաննու Կարապետին. ● Լրումն լս. Տեղ տեղ անձրև։ | 13 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| 30 | Գշ. դյ. Ս. մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի և Զաքարիայի հօրն Ս. Յովհաննու Մկրտչի։ Ռուսաց՝ Փոխադրութիւն նշխարաց Ս. Աղէքսանդր Նևսկացւոյ։ | 14 |
| 31 | Դշ. դէ. Պահք։ | 15 |

—

Այս ամսուայ 1-էց մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ.24 րոպէ։

---

ՕԳՈՍՏՈՍ.—Կոյսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան բարեկազմ է, անկեղծ, մեծահոգի, խելօք, ողջախոհ, համեստ և բարեգործ։ Կեանքի մէջ վարուելու կերպը չիմանալով ու ամեն տեսակ հնարքներից զուրկ լինելով շատ-շատ խաբւում է և յափշտակւում։

Իսկ ծնուած աղջիկը ամօթխած է, ժուժկալ, աչքերը գեղեցիկ և երեսի գծագրութիւնը որոշ։ Նա կ'ամուսնանայ, իր ընտանիքում սիրելի, բարեպաշտ, հաւատարիմ և տնտեսան մայր կը լինի, թէև իր որդիքը, որոնք աւելի իգական սեռին կը պատկանին, նոյնպէս մինը միւսից աւելի գգուելի ու գեղեցիկ կը լինին։

---

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

Սեպտեմբեր ամսուայ անունը ծագում է Լատինական (septembre) բառից։ Այսպէս անուանեց Հռոմուլոսը տարուայ եօթներորդ ամիսը, որ աշունքուայ առաջին ամիսն էր։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Հոռի։

1 Եշ. դյ. Ս. Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն։ 16

2 Ուր. դլ. Պահք։ 17

3 Շբ. բյ. Տօն Նիկիոյ Սուրբ ժողովոյ 318 հայրապետացն։ 18

4 ✠ Կիր. բլ. Ժ. Կիր. զկնի Վերափոխման։ Բարեկենդան Ս. Խաչի։ 19

5 Բշ. փյ. 1. օր Ս. Խաչի պահոց։ 20

6 Գշ. ֆլ. 2. օր Ս. Խաչի պահոց։ 21

☾ Վր. քու. լս. Փոփոխական եղ.

7 Դշ. փյ. 3. օր Ս. Խաչի պահոց։ 22

Ցեր. Նախատ.

8 *Եշ. փլ. 4. օր Ս. Խաչի պահոց։ 23

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Տօն Ծննդեան Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ 'ի յԱննայէ.—Եւաց. և Ռուսաց։ | |
| 9 | Ուր. ադ. 5. օր Ս. Խաչի պահոց։ | 24 |
| 10 | Շբ. ժն. Տօն Ս. եկեղեցւոյս ի Նաւակատիս Ս. Խաչին։ Նաւակատիկ։ | 25 |
| 11 | ✱ Կիր. բյ. ԽԱՉՎԵՐԱՑ։ | 26 |
| | ☼ Արեգ. 'ի կշիռն մտանէ։ 9 ժ. 22 րոպ. առաւ. Աշնանամուտ և հաւասարակաց — Տիւ և գիշեր հաւասար։ | |
| 12 | ✱ Բշ. բէ. 2. օր Տօն Ս. Խաչի։ Յիշատակ մեռելոց։ | 27 |
| 13 | Գշ. գյ. 3. օր Տօն Ս. եկեղեցւոյ։ | 28 |
| 14 | Դշ. գէ. 4. օր. Տօն Ս. Եկ. Գանձք։ Եւս Ռուսաց' Խաչվերաց։ | 29 |
| | ◎ Ծն. լս. Գորշկուց։ | |
| 15 | Եշ. դյ. 5. օր Տօն Ս. եկեղեցւոյ։ | 1 |
| 16 | Ուր. [illegible]. 6. օր Տօն Ս. Խաչի։ Պահք | 2 |
| 17 | Շբ. ադ. 7. օր Տօն Ս. Խաչի։ Լատինաց' Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի սահմանս Հռոմայ և Նէապօլսոյ։ | 3 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 18 | ✠ Կիր. ժէ. Բ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի։ | 4 |
| 19 | Բշ. բթ. Պահք։ Ս. Մամասայ, Փելիկտեոնի և Սիմէոնի Սեւնակեցւոյն։ | 5 |
| 20 | Գշ. բէ. Պահք։ Ս. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր Մծբին Վարդանայ։ | 6 |
| 21 | Դշ. գյ. Պահք։ | 7 |
| | ◑ Առ. քառ. լս. Անձրեւոտ եղ. | |
| 22 | Եշ. գէ. Պահք։ Ս. հայրապետացն Բարսղամու, Անթիմոսի և Երանոսի։ | 8 |
| 23 | Ուր. դյ. Պահք։ | 9 |
| 24 | Շբ. դէ. Ս. Գէորգայ զօրավարին, Աղակոսի և Ռամանոսի երգեցողին։ Հանդիսաւոր օր ուխտի Տփխիսայ մերձակայ Տաննարադ (Ս. Գէորգ եկեղ.) ուխտատեղւոյն։ Անուանակոչութիւն Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի։ | 10 |
| 25 | ✱ Կիր. ադ. Գ. Կիր. զկնի Ս. | |

Օ ՍԵՊՏԵՄԲԵՐ Ն

Խաչին։ Տօն Վարագայ Ս. Խաչին 11
26 Բշ. Ժլ. Ս. Դաւթի Դվնեցւոյն
և Ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամ- 12
բէուհեւոյն։
Ռուսաց՝ Ննջումն Ս. Յովհաննու
Աւետարանչին։
27 Գշ. Բյ. Ս. Եստաթէոսի և կնոջ 13
նորա Թէոփիստոսի և երկուց որդ-
ւոցն և կուսանացն Երմոնեայ և
Նեքտառինեայ։
28 Դշ. Բլ. Պահք։ 14
● Լրումն լուսնի. Զօլ եզ.
29 Եշ յ. Ս. Իշխանացն Սահա- 15
կայ և Համազասպայ։
30 Ուր. Գլ. Պահք. 16
Ռուսաց՝ Ս. Գրիգորի Լուսաւոր-
չին Մրոյ և Ս. Կուսանացն Հռիփ-
սիմեանց և Գայիանեանց։

—

Այս ամսուայ մէկից մինչև 30-ը օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ —Կշիռն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան վճռաէր է, կամակոր, ծաղրարան և սաստիկ իւր բաւականութեանց ետևից ընկնող. ունի և լաւ ձեռք, ճառախօսութեան ձիրք, բարեհամբոյր է, միայն երբ իւր շահերը պահանջում են՝ իւր տուած խոստումը շատ հեշտ է դրժում և իւր ունեցած զգաստութեան շնորհիւ, շատ վտանգներից հեշտութեամբ զերծ մնում։

Իսկ ծնուած աղջիկը սիրելի է, ուրախ, հրապուրիչ ձևերով օժտուած, բախտաւոր և բազմաթիւ երկրպագուներ ունեցող. միայն զգաստ պէտք է լինի, որովհետև վերջն անպատճառ զղջալու է։

Սեպտեմբերին ծնուածներն ահասարակ ինչպէս 33 տարեկան հասակում, այնպէս էլ ջրից միշտ զգուշանալու են։

---

# ՀՈԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

Հին ժամանակները Հռոմում, այս ամսի 15-ին ի պատիւ պատերազմի չաստուած Մարսի, զոհաբերում էին նժոյգներ և Հռոմուլոսի կարգաւորած տարուայ ութերորդ ամիսն լինելով, այս պատճառաւ անուանուեցաւ octobre, որ լատիներէն նշանակում է ութերորդ։ Այս ամիսը աշունքուայ միջի ամիսը լինելով, հին ազգերի մէջ այս ամսում կատարվում էին ժողովրդական տօներ—հանդէսներ, դաշտային աշխատանքի աւարտման և այգեկոյթի պատճառաւ։ Իսկ այս ժամանակ որովհետև Կովկասում այգեկոյթ է լինում, ինչպէս ժողովուրդը ասում է (բաղաքաղ) և գինի են քամում, դորա համար էլ մեր դրացի վրացիք այս ամսին ող-



ղակի անուանում են Ղվինօբիս-թվէ, գինիներու-ամիս։ Մեր նախնիք այս ամսին անուանում էին Սահմի։

1 Շբ. գժ. Ս. Եօթանասուն և Երկու աշակերտացն Քրիստոսի։ 17
Յ. և Ռուսաց՝ Պաշտպանութիւն Ս. Աստուածածնի։

2 * Կիր. դա. Դ. Կիր. զկնի Ս. Խաչի։ 18

3 Բշ. ոյ Ս. Փոկասու հայրապետին և Երանոսի հետեւողին Առաքելոցն։ 19

4 Գշ. ոյ. Դ. կուսանացն Թեկղի, Վարվառեայ և Պեղեգեայ։ 20

5 Դշ. բյ. Պահք։ 21

6 Եշ. թկ. Ս. Պանտալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Նեպրակ-սեայ կուսին։ 22

☾ Կր. քա. լս. Առաջամած եղ.

7 Ուր. գյ. Պահք։ Ցեր նախ. 23

8 * Շբ. թկ. Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, 24

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Օ | Ն

Դաւթի անյաղթ—փիլիսոփային,
Գրիգորի Նարեկացւոյն և Ներ-
սէսի Կլայեցւոյն։
9 * Կիր. գժ. Ե. Կիր. զկնի Ս. Խաչի 25
10 Բշ. գէ. Գիւտ նշխարաց Ս. Գրիգո- 26
րիսի Աղուանից կաթողիկոսի և
Ս. Հարցն Թաթլոյ, Վարոսի և
Թումասու, Անտոնի Կրօնաւորի և
եօթն խոստովանողացն՝ որք
Ց՚իննակնեայմանան կատարեցան։
☼ Արեգակն 'ի Կարիճն։
11 Գշ. դժ. Ս. Առաքելոցն Անանիայի 27
Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպո-
սի, Յովհաննու, Շիղայի և Սիղիա-
նոսի։
12 Դշ. դէ. Պահք։ 28
13 Եշ. բժ. Ս. Դիոնեսիոսի Արիսպագա- 29
ցւոյն, և Ս. Առաքելոցն Տիմո-
թէոսի և Տիտոսի։
14 Ուր. բէ. Պահք։ 30
☽ Ծն. լս. Խաւա եգ.
15 Շբ. գժ. Ս. Աւետարանչացն 1
Մատթէոսի, Մարկոսի, Ղուկա-
սու և Յովհաննու։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Օ | Ն

16 * Կիր. գէ. Զ. Կիր. զկնի Ս. Խաչի 2
17 Բշ. դժ. Ս. Ղեւկիանոսի Հաբե- 3
րապետին որ հաւատաց 'ի Խաչե-
լութիւնն Քրիստոսի և Յովսէփայ
Աստուածահօրն, Յովսէփայ Արի-
մաթեացւոյն, բարեկամին Քրիս-
տոսի Ղազարու և քերցն նորա
Մարթայի և Մարիամու։
18 Գշ. դէ. Ս. Թէոդիտոսի քահա- 4
նային, Զենոնի զինաւորին, Մա-
կարայ, Եւդոքսեայ և Ռոմիլայ։
19 Դշ. դժ. Պահք։ 5
0 Եշ. ժէ. Ս. Խարիթեանց և Ս. վկա- 6
յիցն Որոնեմեայ և Քրիստափորի
և երկուց կանանցն Կալլինիկեայ
և Ակուլինեայ։
☽ Առ. քռ. Աչնանոյն եգ.
21 Ուր. բժ. Պահք։ 7
22 Շբ. բէ. Ս. Երկոտասանից վար- 8
դապետացն Ոսեթէոսի, Դիոնե-
սիոսի, Սեղբեստրոսի, Աթանա-
սի, Կիւրղի Երուսաղեմացւոյն,
Եփրեմի Խորին ասորւոյ, Բարսեղի

Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղէքսանդրացւոյն:
Թուաց՝ Տօն Ղազանու Ս. Աստուածածնայ պատկերին:

23 ✠ Կիր. գյ. Է. Կիր. զկնի Ս. Խաչի: 9
Գիւտ—Խաչ:
24 Բ. գյ. Ս. Անաստասայ քահ. Վարդանի և Թէոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա կատարեցան: 10
25 Գշ. գյ. Ս. Հերակղէքեանց, որք ի Սամոսատ կատարեցան: 11
26 Դշ. գյ. Պահք: 12
27 Եշ. գյ. Ս. Սեւերիանոսի Սեբաստացւոյն, Բարեքեայ, ծերոյն և 84 աշակերտացն նորին: 13
◐ Լր. լս. Հողմաբեր եղ.
28 Ուր. գյ. Պահք: 14
29 Շբ. բյ. Ս. Յովհաննու Ոսկեբերան հայրապետին: 15
30 ✠ Կիր. բյ. Ը. Կիր. զկնի Ս. Խաչի: 16



31 Բշ. գյ. Ս. Ստեփաննոսի Հռովմայ հայրապետին և քահանայիցն սարկաւագացն և ժողովրդոցն: 17

—

Այս ամսոյ 1-ից մինչև 30-ն օրն պակասել է 1 ժ. 10 րոպէ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Կարիճ: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համարձակ է և խորամանկ, բայց իր պակասութիւնները ծածկելով՝ իր արտաքին գեղեցկութեամբ խաբում է և շատերի աչքը շլացնում: Օրիորդներ, այսպիսի կեղծաւորներին երբէք չհաւատաք դրանք միայն երեսանց են ուրախ երևում, այդպիսիների ծիծաղը վտանգաւոր է, աղէտաբեր և առանձնութեան ժամանակ դրանք մելամաղձութեամբ են տանջւում:

Իսկ ծնուած աղջիկը՝ աշխոյժով լի, ստաաց, ծածկամիտ, կեղծաւոր, դաւաճան, փոփոխամիտ և ագահ, սիրում է ծաղրել և ուրիշների մասին վատ կարծիք յայտնել: Եւ չնայելով իր քաղցրանկատութեան ու բարեհաճոյ ձևերին՝ սիրտը բարութեամբ չէ համակուած:

Հոկտեմբերին ծնուածներն առհասարակ իրենց գործերում յաջողութիւն են գտնում և հարըստութիւն են ձեռք բերում: 40 տարեկան հասակումն է, որ թէ իրենց բնաւորութիւնն է փոխւում դէպի լաւը և թէ իրենց գործերի մէջ փոփոխութիւն է լինում: Միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են:

---



# ՆՈՅԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

Նոյեմբեր ամս. անունը ծագում է լատին. Novembre բառից, որ նշանակում է իններորդ: Հռովմայեցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս յիմայ, այլ Մարտ ամսից: Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ: Իսկ Վրաստանում, որովհետև այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիօրգ—օբայ, կամ Գէօրգօբիս-թվէ, որ նշանակում է Գէորգայ-տօնի ամիս:

1 Գշ. գչ. Ս. Ակիփսիմեայ եպսկ. 18
Յովսէփայ քահ. Այթալայ սարկաւագին և Պղատոնի վկային:

О ՆՈՅԵՄԲԵՐ Ն

2 Դշ. գյ. Պահք: 19
3 Եշ. գէ. Ս. Հայրապետացն Մետ- 20
րոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօ-
ղոսի խոստովանողին և Ս. Նօտա-
րացն Մարկիանոսի և Մարտիրոնի:
4 Ուր. դյ. Պահք: Ցերեկ. Նախատ. 21
5 Շբ. դէ. Ս. Հրեշտակապետացն 22
Գաբրիէլի և Միքայէլի և ամե-
նայն երկնային զօրացն:
◐ Վր. քա. լս. Խառնոյ եղ.
6 * Կիր. եյ. Թ. Կիր. գիւտի Ս. Խաչի: 23
7 Բշ. եէ. Ս. Մելիտոսի Անտիոքայ 24
հայրապետին և Մինասայ եգիպ-
տացւոյն և միւս Մելիտոսի եպ.
Բուրայ քահանային և Տիմու
սարկաւագին:
8 Գշ. զյ. Ս. Դիմիտրեայ վկային 25
և Բասիլիկոսի քահանային:
Լատ. Ընծայումն Ս. Աստուածած.
9 Դշ. զէ. Պահք: 26
10 Եշ. էյ. Ս. Գուրիասայ, Սամօ- 27
նասայ, Աբիբայ սարկաւագին,
Ռամանոսի միայնակեցւոյն, Մաս-

О ՆՈՅԵՄԲԵՐ Ն

կանն խոստովանողի և Հիւսիքո-
սի զինաւորին:
◉ Արեգ. ՚ի Աղեղնաւորն մտանէ:
11 Ուր. գէ. Պահք: 28
12 Շբ. դյ. Ս. Առաքելոցն Անդրէի 29
և Փիլիպպոսի:
◎ Մնունդն լս. Հողմալից եղ.
13 * Կիր. դէ. Ը. Կիր. գիւտի Ս. Խաչի: 1
14 Բշ. եյ. Ս. Աբրահամու և Խորե- 2
նայ անարծաթ բժշկացն, Կոզ-
մայի և Դամիանոսի:
15 Գշ. եէ. Ս. Անդրէի զօրավարին 3
և բանակի նորին, Կալինիկոսի և
Դոմետեայ վկայիցն:
16 Դշ. զյ. Պահք: 4
17 Եշ. զէ. Ս. Անդրիանոսի և կնոջն 5
նորա Անատօլայ, Թէոդորոսի և
Եւթիքոսի վկայիցն:
18 Ուր. էյ. Պահք: 6
19 Շբ. գէ. Տօն ամենայն սրբոց— 7
հնոց և նորոց, յայտնից և ան-
յայտից:
◑ Առ. քա. լս. Ցրտոտ եղ.

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 20 | ✠ Կիր. ա՛յ. Ժ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Յիսնակի պահոց։ Ցերեկոյեան Նախատօնակ։ | 8 |
| 21 | ✠ Բշ. ա՛լ. 1. օր Յիսնակի պահոց։ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն. — Եւս Ց. և Ռուսաց։ | 9 |
| 22 | Գշ. բյ. 2. օր Յիսնակի պահոց։ | 10 |
| 23 | Դշ. բլ. 3. օր Յիսնակի պահոց։ | 11 |
| 24 | Եշ. գյ. 3. օր Յիսնակի պահոց։ | 12 |
| 25 | Ուր. գլ. 5. օր Յիսնակի պահոց։ | 13 |
| 26 | Շբ. դյ. Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին։ ☽ Վր. քռ. լօ. Բփոբեր ծչ. | 14 |
| 27 | ✠ Կիր. դլ. Ա. Կիր. Յիսնակի։ | 15 |
| 28 | Բշ. ա՛յ. Ս. կուսանացն Յուլիտանեայ և Վասիլուհւոյ, | 16 |
| 29 | Գշ. ա՛լ. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Պօղոսի։ | 17 |
| 30 | Դշ. բյ. Պահք։ | 18 |

Այս ամսուայ 1-էն մինչև 31-ն օրը պակասել է 1 ժ. 19 րոպէ։

ՆՈՅԵՄԲԵՐ. — Աղեղնաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ գտնող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, փառասէր, աշխատասէր, ի բնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իւր ունեցած լաւ յատկութիւնների համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ։ Գլխաւոր պակասութիւնը իւր կասկածոտ բնաւորութիւննէ։

Նոյեմբերին ծնուածներն առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր։ 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խորին ծերութեան կը հասնեն։

---

Օ | Ն

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական dectembre բառից, որ նշանակում է տասներորդ։ Այսպէս անուանեց ամիսների հիմնադիր Հռոմուլոսը տարուայ տասներորդ ամիսը։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Քաղոց։ Որովհետև Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդ. տօնը, այս պատճառաւ այս ամիսը վրացիք անուանել են Քրիստիշոբայ, կամ Քրիստիշոբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս։

1 Եշ. Թէ. Ս. Կղեմայ հայրապետին 19
և Թաւարատայ Տռոմինայ եպիսկոպոսին։

2 Ուր. Քյ. Պահք։ Յերեկ. Նախատ. 20

3 ✠ Շբ. Գէ. Ս. Առաքելոց և ա- 21
ռաջին Լուսաւորչացն մերոց ԹԱ-

Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն

ԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ։

4 ✠ Կիր. դՅ. Բ. Կիր. զկնի Յիսնակի։ 22
☾ Վր. քառ. լս. Ձնաբեր հողմոտ։

5 Բշ. գէ. Ս. Գենադիոսի եպիսկո- 23
պոսին և Մերկեռիոսի զինուորին.

6 Գշ. տէ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախա- 24
վկայ և անդրանիկ Թագաւորին
մերոյ։

7 Դշ. տէ. Պահք։ 25

8 Եշ. Բյ. Ս. Հարցն Եգիպտաց- 26
ւոցն, Պօղոսի, Պօղայ, Մակարայ,
Եւագրի, Յովհաննու Գբնեցւոյն,
Յովհաննու կարճահասակին, Նե-
ղոսի, Արսէնի, Սիսոյանու, Դանիէ-
լի, Սրապիոնի, Մակարիոսի, Պի-
մէնի և այլոց Ծ. հարցն։
Յերեկոյին Նախատօնակ։

9 ✠ Ուր. Յէ. Պահք։ ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ 27
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ.
☼ Արեգակն'ի յԱյծեղջիւրն մտանէ
12 ժ. 59 ր. երեկ. Ձմեռնամուտ և
արևադարձ. ցերեկն սկսանէ եր-
կարել և գիշերն կարճանալ։

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| 10 | Շբ. գՅ. Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ հայրապետին։ | 28 |
| 11 | ✠ Կիր. գՆ. Գ. Կիր. զկնի Յիսնակին։ Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց | 29 |
| 12 | Բշ. գՇ. Պահք։ Ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրատոսի և կամաւոր ողջատացն Յովհաննու և Ալէքսիանոսի։ Լատ. Ծնունդ Տեառն։ ☽ ԾՆ. լս. Ցերեկոյեան եզ. | 30 |
| 13 | Գշ. դՅ. Պահք։ Ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն, որք յ'Սրբէլս կատար. | 1 |
| 14 | Ուր. ոՅ. Պահք։ | 2 |
| 15 | Եշ. ոՆ. Պահք։ Ս. Եւստրատիոսի, Օզսենտոսի, Եւզենիոսի, Ովրեստեսի և Մարդարիոսի։ | 3 |
| 16 | Ուր. բՅ. Պահք։ Յերեկոյին Նախատօնակ։ | 4 |
| 17 | Շբ. բՆ. Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին։ | 5 |
| 18 | ✠ Կիր. գՅ. Դ. Կիր. զկնի Յիսնակին։ ☽ Առ. քռ. լս. Թխոյլից եզ. | 6 |
| 19 | Բշ. գՆ. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Ագդէի և Մարութայ եպիսկոպոսին։ Ըստ Նոր տոմարի Տարեմուտ և յունուարի 1-ն 1917 Թ. Լատ. տօնի Տնօրէնութեան Տեառն։ | 7 |
| 20 | Գշ. դՅ. Սրբոց Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոփնայ վկ. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիկեայ։ | 8 |
| 21 | Դշ. դՆ. Պահք։ | 9 |
| 22 | Եշ. ոՅ. Ս. Ինդոսի, Դոմինի և Գդերիկոսի, քահանային և երկուց Թիւրոցն, որք այրեցան եկեղ. Նիկոմիդացւոց։ | 10 |
| 23 | Ուր. ոՆ. Պահք։ Յերեկ. Նախատ. | 11 |
| 24 | Եշ. բՅ. Ս. Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն։ Ռուս. Ծրագալոյց Ծննդեան։ Լատ. Յայտնութիւն տեառն։ | 12 |

Օ ԴԵԿՏԵՄԲԵՐ Լ

25 ✠ Կիր. քկ. Ե. Կիր. զկնի Յիսնակի. 13
Ցերեկ. Նախատօնակ։
Ռուսաց՝ Ծնունդ Տեառն.
26 Բշ. փյ. Ս. Ստեփաննոսի Նախա- 14
վկային և առաջին մարտիրոսին։
Հանգիսաւոր օր ուխտի Ս. Ստե-
փաննոս եկեղ. Տփխիսոյ՝ որ 'ի
յանապատին կուսանաց, ուր և
ամփոփէ մաս նշխարաց—աջ Ս.
Ստեփաննոսի Նախավկային։
Ցերեկ. Նախատօնակ.
⊕ Լր. լս. Դառնաշափն եղ.
27 Գշ. փէ. Ս. Առաքելոցն Պետրոսի 15
և Պօղոսի։
28 Դշ. փյ. Պահք։ Ցերեկ. Նախատօն. 16
29 Եշ. փէ. Ս. որդւոցն Որոտման 17
Յակոբայ առաքելոյն և Յովհան-
նու Աւետարանչին։
Բարեկենդան՝ Ծննդեան պահոց.
30 Ուր. տյ. 1. օր Ծննդ. պահոց։ 18
31 Շբ. տէ. 2. օր Ծննդ. պահոց։ 19
Ս. Բարսեղի հայրապետին և եղ-
բօր նորին Գրիգորի Նիւսացւոյն
Սեղբեստրոսի Հռովմայ հայրա-

Օ ԴԵԿՏԵՄԲԵՐ Լ

տին և Աբբա Եփրեմի Խորին Ասորւոյ։

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 0 ժ. 37 ր.

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Այծեղջիւրն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինիլ և ձախորդութիւնները շատ կ'քաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, չար, ագահ և անբարիշտ կլինի։ Իւր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ, որովհետև իւր ամեն բաւականութեանց սիրահար է։

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջահէլ ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ, պակուած ժամա. Նաև նա խանդոտ՝ թէև այս պա-կասութիւնները միշտ աշխատում

է ծածկել։ Եթէ չափաւոր և զգոյշ լինի մինչև խորին ծերութեանը կըհասնի։

Դեկտեմբերին ծնուածներն, առհասարակ իրենց գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգոյշ սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի հանապարհորդութիւն։ Առևտրից օգտուող, իսկ շինութիւններից վնասուող։ Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանան։

---

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Եթէ երբեմն եղանակի գուշակութիւնները ճիշտ չեն կատարւում, այդ պատահում է երկրի աշխարհագրական դիրքից և օդերևութաբանական զանազան պատճառներից, նամանաւանդ, պարբերաբար որոշ ուղղութեամբ փչող հողմերի, ցիկլոնների և մթնոլորտի յեղաշրջման (пертурбаціи) ժամանակ։

Ծ. Աշխ.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ
## 1916 Թ. «ԾՈՑԻ-ՕՐԱՑՈՅՑԻ»

## I. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

### ԱՐԵՒԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

1916 թ. երկրագնդիս վրայ երեք անգամ արևի և երեք անգամ լուսնի խաւարումներ կնկատուին, որոնցից

1) Արևի լիակատար խաւարումն տեղի կունենայ յունվարի 21-ին, որը կսկսուի ցերեկուայ 3 ժամ 0 րոպէին և կվերջանայ գիշերուայ 9 ժամ 4 րոպէին։

2) Մանեկաւոր խաւարումն արևի տեղի կունենայ յուլիսի 17-ին, որը կսկսի գիշերուայ 2 ժամ 0 րոպէին և կվերջանայ 7 ժամ 17 րոպէին առաւօտեան։

3) Մասնաւոր խաւարումն արևի սկիզ. դեկ. 11 ժ. 3 ր. վերջը 12 ժ. 9 ր. առ.

4) Մասնաւոր խաւարումն լուսնի 7 ին յունվարի, սկիզբը 10 ժ. 25 ր. առ. վերջը 11 ժ. 56 առ.

5) Մասնաւոր խաւարումն լուսնի 2 յուլիսի, սկիզբը 5 ժ. 50 ր. գիշ. վերջը 8 ժ. 43 ր. առ.

6) Լիակատար խաւարումն 26 դեկտ. սկիզբը 8 ժ. 21 ր. առ., վերջը 12 ժ. 9 ր. ցերեկուայ։

Այս բոլոր խաւարումները կնկատուեն Արեւմտեան Եւրոպայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Մեծ Ատլանտեան և Հարաւային սառուցեալ ովկիանոսներին կից գտնուած երկրներում։ Իսկ Կովկասում այս խաւարումներից ոչ մինը չի նկատուի։



# II. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

## ՆՖԷՄԷՐԴՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1916 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ։

Ըստ տիեզերային մարմինների շարժման, նրանց դիրքի՝ ուղղութեան, երկրագնդիս վրայ ունեցած ազդեցութեան, ինչպէս և Տանուտէրի, Խեցգետին կենդանակերպ համաստեղութիւնն լինելով, գուշակվում է, որ 1916 թ. անցնելու է.

Պտղաբերութեան կողմից, ցորենով և ամենայն պտուղներով թէև պարարտ ու առատ, սակայն շատ թանգ։ Տեղ տեղ էլ մորեխը տալով, անասունների կէրը շատ պակաս։

Եղանակները.—Ձմեռը՝ սկզբումը կարկտով ցուրտ ու ձնառատ. մէջը

տաք, վերջը բարեխառն։ Գարունը՝ հողմախառն, որոտալից անձրևներով և մինչև յունիսը ցուրտ։ Աշունքը ցուրտ, և երկարատև։

Ա ռ ո ղ ջ ու թ ե ա ն կողմից, պէտք է աշխատել սակաւակեր լինել. այս տարի մեծ մասամբ ջերմութիւնից առաջացած հիւանդութիւններ առաջ կը գան, մանաւանդ դողը կը շատանայ։ Ծերերին ու երեխաներին մեծ հարուած կը հասնի։ Իսկ ըստ Դեմոկրատեսի պէտք է զգուշանալ որ մահտարաժամ չընկնի։ Աղբիւրների ջրերը պակասելով, եզներ էլ շատ կը սատկեն։

Կ ե ն ց ա ղ ա վ ա ր ու թ ե ա ն կողմից, եղբայրների ու արտակիցների մէջ տարաձայնութիւն, գրագէտների ու վաճառականների մէջ խաբէութիւն ու



նենգութիւն, որից ամենքը մեծ դժուարութիւն կը կրեն։

Արտասովոր երևոյթներից՝ երկրի վրայ մեծ սրտմութիւն կը գայ. շատ տեղերում պատերազմ, կռիւ ու վէճեր երևան կը գան, մանաւանդ զանազան տեսակ անձանց կողմից իրանց թագաւորի դէմ։ Իսկ արքունի ծառայողներին՝ մեծ վնաս ու նեղութիւն է հասնելու։

Եղանակի ամենաճիշտ գուշակութիւնը օդաչափի միջոցով։

Պարզ եղանակ այն ժամանակ է սկսվում, երբ օդաչափի բարձրութեան չափը միլլիմետրով հասնում է սոյն քաղաքներում նշանակուած հետևեալ թուերին։

| | | | |
|---|---|---|---|
| Թիֆլիս | 731 | Օդեսսա | 762 |
| Բագու | 766 | Վարշավա | 756 |
| Բաթում | 756 | Քերչ | 767 |
| Գանձակ | 728 | Մոսկուա | 750 |
| Լենքօրան | 769 | Պետրօգրադ | 763 |
| Փոթի | 767 | Խարկով | 755 |
| Պեատիգօրսկ | 730 | Տօմսկ | 760 |
| Թէմիրխան-շուրա | 718 | Տամբով | 754 |
| Վլադիկավկազ | 708 | Ռիգա | |
| Յալթա | 765 | Նիժնի Նովգօրոդ | 752 |
| Հաշտարխան | 770 | Ղազան | 759 |
| Կօկանդ | 730 | Սարատով | 760 |
| Տաշքենտ | 726 | Լիբավա | 765 |
| Ստավրօպօլ | 715 | | |



# III. ՏՕՄԱՐԱԿԱՆ

## ԱՐԵՆԱՎԱՌ ԶԱՏԿԻ ՀԱԶՈՒԱԴԵՊՔԸ

Զատկի տօնը քրիստոնեայ եկեղեցիները կատարում են Նիկիոյ ժողովի (325 թ.) սահմանած կանոնադրութեան համաձայն մարտ ամսի մէջ ծնուած լուսնի լրումից յետոյ պատահած առաջին կիրակի օրը։ Այդ պատճառով բոլոր միւս նշանակված տօները զատկական տօնի հետ մեծ կապ ունեն, մանաւանդ հայկական նախնական եկեղեցու բոլոր այն տօները, որոնք շարժական են, բացի Ծննդի, Տեառնընդառաջի, Աւետման, Երից-ամաց և Ցղութեան տօներից։

Յունական եկեղեցին երբ Զատկի տօնը կատարում է մարտի 22-ին, այդ դէպքում նայն եկեղեցու Տեառնընդա-

ռաջը ընկնում է Բարեկենդանի կիրակի օրը, որպիսի տօնը, սակայն, Մեծի պահոց տխուր օրերին չկատարելու պատճառով, յետաձգում են Բարեկենդանի շաբաթ օրը։

Իսկ կաթոլիկ եկեղեցին, երբ Աւետեաց տօնը ընկնում է Զարչարանաց կամ Զատկի շաբաթը, նոյնը այդ տօնի կատարումը յետաձգում է Զատկի հետեւեալ շաբաթը։

Անցեալ 1915 թ. Զատիկը, որ կատարուեց մարտի 22-ին, շատ հազուադէպ է, որովհետեւ այսպիսի վաղ կատարուող Զատիկ վերջին անգամ միայն տեղի է ունեցել սրանից 312 տարի առաջ՝ Շահ-Աբասի թագաւորութեան օրօք, 1603 թ., այն տարին՝ երբ հայերը գաղթում էին դէպի Ջուղա։

Այսուհետեւ նման հազուադէպ Զատիկներ կը պատահեն 2010, 2105,



2437, 2532, 2627, 2959, 3054, 3149. 3481, 3576, 3671, 4003, 4098, 4193, 4525, 4620, 4715, 5047, 5142, 5237, 5569, 5664, 5759, 6091, 6186, 6281, 6613, 6708, 6803, 7135, 7230, 7325, 7657, 7752, 7847, 8179. 8274, 8369, 8701, 8796, 8891, 9223, 9318, 9413, 9745, 9840, 9935 և 10267 թուականներին։

Մակ. Զմչկ...

# IV. ԻՄԱՍՏՆԵՐ

—Ով իր սխալները ծածկում է, ուրեմն դեռ նա նրանց կրկնում է։

—Սխալները քրքրելով ու ուղղելով իզուր ժամանակ ենք կորցնում, որը կարող էինք ճշմարտութիւններ գտնելուն գործադրել։

—Եթէ յուսահատւում ես, նշանակում է, որ ոչ անցեալդ ես միտդ առնում, ոչ ներկադ խորհում և ոչ ապագադ նախատեսնում։

—Զայրացած ժամանակ հայելուն նայելուն պէս, կը հասկանաս թէ ինչ կերպարանք ես բռնել։

—Մի որևէ մէկին հարիւր անգամ ծառայութիւն կամ օգնութիւն արա, միայն մի անգամ մերժիր և հաւատացած եղիր, որ իր կեանքում հենց այդ մի մերժումն է որ միշտ կյիշի։

—Ոչինչ չունեցողն ու ոչինչ չուզո-



ղըն, ոչինչ էլ չի կորցնի որ միշտ մեծահոգի լինի։

—Կեանքի մէջ երեք բան կայ, որի մասին, երբ հատնում և անհետանում է, անչափ ափսոսում են. դրանք են, դրամը, փառքը և ջահելութիւնը։

—Ողբալ իր ջահելութիւնը, նշանակում է՝ ափսոսալ հենց այն գեղեցիկ կնոջ վրայ, որը միշտ մեզ խաբել է ու շահագործել։

—Ճշմարիտ սիրոյ և իսկական բաղդաւորութեան մասին շատերն են ճառում ու երազում, սակայն երջանիկ դրութեան հասնելուն շատ քչերին է յաջողվում ու վիճակվում։

—Կինը միշտ վերջը լաց է լինում այն բանի մասին, որի մասին նա առաջուց ծիծաղում էր։

—Կինը բնութեան գեղեցիկ սխալանքն ու պակասութիւնն է։

—Սիրոյ միակ յաղթութիւնը, միանգամայն նրա ճանկերից փախչելն է։

# V. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

## ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՑ

1 Աշխատիր արևի ծագումից առաջ արթնանալ։

2. Անքուն չմնալ և ժամանակին հանգստանալ։

3. Որքան կարելի է բացօդեայ մնալ ու աշխատել

4. Որքան կարելի է թօղից, դադրելուց ու քրտնելուց խոյս տալ։

5. Պահպանել հոգեկան ամեն տեսակ հանգստութիւն և չզայրանալ։

6. Խղճի խայթից զգուշանալ և անիրաւութիւններ չգործ դնել։

7. Այսօրվայ գործդ էգուց մի գցեր և ամեն օր վերջդ մտածիր։

8. Ոչ այնքան բարակ հանդերձներ հագիր, որ մրսես, և ոչ այնքան տաք հագնուիր որ քրտնես։



9. Ոգելից ըմպելիքներից զգուշացիր։

10. Մարմնիդ մաքրութիւնը պահպանիր, յաճախ լուացուելով։

11. Ստամոքսդ մ՛ բեռնաւորիր աւելորդ կերակուրներով, և աշխատի՛ր աւելի կաթեղէն ու բուսեղէն կերակուրներ գործածել։

12. Սենեակդ շատ տաք մի պահիր և այն էլ փայտով տաքացրու։

13. Շողոքորթներից ու կեղծ բարեկամներից զգաստ կաց։

14. Ունեցածովդ բաւականացիր և հարկաւորութիւններդ չափաւորիր։

15. Ժամանակին ամուսնացիր, ինչպէս և այրիանալիս նորից ամուսնացիր։

16. Ամեն մի յիմարի մի լսիր։

17. Առանց գործի մի մնայ։

18. Պարտք մի վերցնիլ։

19. Ավերախտի հետ գործ մի բանիր։

20. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ միշտ տաք պահիր։

21. Կերակուր ուտելուց յետոյ բերանդ ողողիր ու ատամներդ մաքրիր։

22. Ցրտից զգուշացիր, մանաւանդ քրտնած ժամանակդ։

23. Բնակարանիդ լուսամուտները միշտ դէպի արևը դարձրու—շինիր։

24. Քաղաքի աղմկալից ու օդը վտանգաւոր միկրոբներով լի կեանքից խոյս տուր, մանաւանդ ամառը։

Այս կանոնները պատանեկութիւնից սկսած պահելուց յետոյ, հաւատացած եղիր, որ կարող ես մինչև 180—200 տարի ապրել։

---



# VI. ԲԺՇԿԱԿԱՆ

## ՎԵՐՔԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուր գործիքներից առաջացած վէրքերի մէջ, սկզբնական օգնութիւնը ու ջանքը արիւնհոսութեան կանգնեցնելն է, որի համար պէտք է աշխատել շատ սառը ջուր գործածել, որպէս զի արիւնի անօթները շուտ կուչ գան։ Երբեք խանձիլ *) չգործածել։ Եւ պէտք է վէրքը լաւ զննել ու նայել որ վէրքի մէջ օտար առարկայ կամ աւելորդ իր մնացած չլինի, որից յետոյ, վէրքի ե-

*) Խանձիլը—այրած շորի, լաթի կտոր է, որ արիւնահոսութեան դէպքում մեր ռամիկ ժողովուրդը սովորութիւն ունի արիւնահոսութիւնը դադարեցնելու, չիմանալով թէ որքան վնասակար է այդ միջոցը և թէ վէրքը որքան արգելք է լինում վէրքի առողջանալուն։

Ե. Աշխ...

զերքները միմեանց աւելի մօտեցնելով զգուշութեամբ կապելու է։

—

Ծակող գործիքներից պատճառած վերքերի դէմ ինչ տեղ էլ լինի, ծակուած վէրքը պէտք է աշխատել շուտ ծածկել, որպէս զի այդ անցքով օդ չը մտնի։ Այս դէպքում եւ սառը ջուր գործածելու է և հանգիստ դրութեան մէջ մնալով, աշխատելու է չշարժուել։

Հրազէնքերից պատճառած վէրքերի դէմ սկզբնական օգնութիւնը, վէրքը ուշադրութեամբ քննելն է և այն լաթի, շորի կտորի մաքրելն է, որոնք գնդակի հետ մտնում են կաշու մարմնի մէջ։

Եթէ նկատւում է, որ վէրքի մէջ մնած գնդակը կարելի է մատով հանել, պէտք է անմիջապէս աշխատել զգուշութեամբ նրան հանել, իսկ եթէ



չի նշմարւում, չպէտք է աշխատել փնտրել կամ գտնել, որովհետև ոչ թէ միայն աւելի խորը կը մղէք նրան, այլ և այդպիսով բժշկի գործը աւելի կը դժուարացնէք։ Միայն վէրքը ջրով լուացէք և անընդհատ սառը կոմպրէսներ դրէք, մինչև բժշկի հասնելը։

—

Այրուած վէրքը՝ եթէ այրուած տեղում դեռ վէրք չէ գոյացել, անմիջապէս սառը ջրում դնելու է, իսկ եթէ որ և է պատճառով անկարելի է, ծածկեցէք թրջած ջրով, ձնով, սառուցով, թարմ ցեխով ու յետոյ քերած կարտօֆիլով պատեցէք։ Այս բոլորը իր մէջ է քաշում տաքութեան մի մասը և զովացնում այրած տեղը։ Իսկ եթէ կաշին—վերնամաշկը արդէն բշտել է։ պէտք է զգոյշ մկրատով հեռացնել և իւղալի օծանելիքներ գործածել, օրի-

նակ ձէթ, իւղ կամ ձուի սպիտակուց։ Ձէթն աւելի յարմար է։ Յետոյ վէրքը ծածկելու է բամբակի հաստ շերտով ու լաթով կապելու։ Եւ դրանից յետոյ հիւանդն իրան այնպէս պէտք է պահի, որ այրուած տեղը, կուչ եկած չմնայ, այլ ձգուած լինի։

—

Կարիճի խածելու դէմ դեղ։

Կարիճի խածելու դէպքում, վէրքը տաք ջրով լուանալուց յետոյ, տարխունը կամ խնձորի ծառի տերևը ջարդած վրան դնելու է ու կապելու։

—

Գինովութեան դէմ միջոց։

Պէտք է տալ մուգ սուրճ կիտրոնով (լիմոնով) և ջրախառն մէկ կամ երկու թէյի գդալ գօֆմանեան կաթիլներ։ Գինովցածի գլուխն ու մէջքը ողնաշարի երկարութեամբ թրջել սառը ջրով։



# VII. ՏԱՆՏԻԿԻՆ

Թունաւոր ձուկը ճանաչելու նշանները։

Թունաւոր ձուկը կարելի է իմանալ —ճանաչել իրա նեխուած հոտից, ատամների դեղնութիւնից, և աւելի նրանից, որ եփելու ժամանակ մաքուր արծաթի կտորը նրա ականջի խխունջներում խրելու դէպքում, մետաղի գոյնի է փոխվում։

—

Սառած կաղամբը բարեփոխելու կերպը։

Սառած կաղամբը երեք ժամ անընդհատ դնում են ձնախառն սառը ջրում, որից կաղամբը բոլորովին թարմանում է։

—

Այն ապակէ ամանները, ո-

րոնք ժամանակի ընթացքում աղտոտնալով գունատուել են, շատ հեշտութեամբ մաքրւում են, եթէ դրանց նաւթով լուանան, և յետոյ տաք ջրով ողողեն։

—

Նուազքը մաքուր և հեշտ լւանալու համար, պէտք է ամէն մի դոյլ (ведро) ջրին 5 մսխալ (զոլոտնիկ) բօրաքս (буру) աւելացնել։

—



# VIII. ԱՐՈՒԵՍՏ

**Թանաքի բծի ոչնչացնելու հնարք։**

Որպէս զի թանաքի բիծը կամ թանաքով գրուած ստորագրութիւնը ոչընչացնուի, պէտք է ամենից առաջ թրթնջուկ (щавельн. кислота) թթուուտի թեթև լուծուածքով կամ հենց կիտրոնի և աղաթթուուտով մաքրել։ Այս թթուուտները լուծում ու գոյնափոխում են թանաքը, չփչացնելով իսկական թղթի վրայ տպած տպարանի մուրը։

—

Գողպատէ իրեղէնները, շատ լաւ մաքրւում են, եթէ դրանց մաքրեն վարդագոյն քլորային (розовымъ ѣдкимъ) սապոնով հարուեն ու ողողուեն։

—

Արճճէ և թիթեղէ իրերը· գործածուելուց գունատուած լինելով, շատ հեշտութեամբ են մաքրվում, եթէ շատ թանձր պարաֆինով (парафинъ) և սապոնով հարուեն։

—

Սենեակում պահուելիք բոյսերի հողից որդերը հեռացնելու միջոց. Պէտք է լայն ու խոր ամանում լեցրած տաք ջրում լուծել մի փոքր քանակութեամբ այրուած կիր. և յետոյ ծաղիկների որդերով լի ամանը, մինչև դմախ բոլորքը խորասուզել—ընկղմել կրի լուծուածքում։ Այսպիսով 5—6 ժամից, ծաղկամանում գտնուած բոլոր որդերը հողի երեսն են դուրս հանում, որոնց հաւաքելով հեշտութեամբ կարելի է ոչնչացնել։

———



# IX. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

## ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Լաւ կովի կաշին՝ փափուկ ու առաձգական է լինում, մանաւանդ ետքի ու վզի կաշիները, տեսքը գեղեցիկ ու կազմուածքը բոլորձև, բարակ ոսկրներով։

Կուրծքը՝ լայն ու դուրս ցցուած, կրծքի երակները և կաթնաջղերը հաստ ու ուռած են լինում։ Սոկայն ջահիլ կովի երակները աննկատելի են լինում։

Մարմինը ու գլուխը՝ երկար, մանր ու բարակ պոզերով, ոտները կարճ մանր ու նեղ կազմով.

Կուրծը՝ մեծ ու երկարացած, ծածկուած մանր մազիկներով, որը կթելուց յետոյ պարպուելով փոքրանում է ու կախ ընկնում։ Եթէ կուրծը կթելուց յետոյ չի փոքրանում այդ նշան է որ կուրծը մսալից է և թէ ճարպալից, ա-

րի պատճառով կաթ քիչ է տեղաւորվում։ Ջահիլ կովերը մանր պտուկներ ունեն, իսկ մի քանի անգամ ծնած ու երկար ժամանակ կթուող կովերը աւելի զարգացած. Երկար ու բարակ պտուկներն եւ լաւ նշան չեն։ Կաթտուող կովի կաթնատուութիւնը իմանալու համար, ամենահաստատը, պէտք է երկու երեք օր կթել ու կշռելով իմանալ նրա տուած կաթի քանակութիւնը։ Իսկ կաթի յատկութիւնը պէտք է փորձել հետեւեալ կերպով. Ջրալի կաթը եղունգի վրայ կաթացնելուց, վրան չի մնում, կամ ապակեայ ամանից թափելուց յետոյ, հետք չի թողնում, ջրի համ ու կապտագոյն է լինում, ընդհակառակը թանձր ու իւղալի կաթը ամանի պատերին թողնում է կաթնի սպիտակ հետք. համը քաղցր է ու իւղալի և եղունգի վրայ կաթացրած դէպքում գնդակաձև մնում է առանց թափուելու

—



# X. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

Կենդանիների յղութեան տեւողութիւնը։

| | | |
|---|---|---|
| Փիղը ծնում է . . . . | 21 | ամսից |
| Ընձուղտը (Ժիրաֆ) . | 14 | » |
| Ուղտը . . . . . . | 12 | » |
| Գոմէշը . . . . . . | 12 | » |
| Էշը . . . . . . . | 12 | » |
| Ձին . . . . . . . | 11 | » |
| Ռնգեղջիւրը . . . . | 9 | » |
| Կապիկը . . . . . . | 7 | » |
| Արջը . . . . . . . | 6 | » |
| Կովը . . . . . . . | 5 | » |
| Ոչխարը . . . . . . | 5 | » |
| Այծը . . . . . . | 5 | « |
| Խոզը . . . . . . . | 4 | » |
| Կողբը . . . . . . | 4 | » |
| Առնէտը . . . . . . | 31 | օրից |
| Ճագարը . . . . . . | 30 | » |
| Մուկը . . . . . . | 28 | » |

| | | |
|---|---|---|
| Առիւծը . . . . . | 100 | » |
| Կատուառիւծը . . . | 73 | » |
| Գայլաշունը . . . . | 63 | » |
| Աղուէսը . . . . | 62 | » |
| Կատուն . . . . . | 55 | » |
| Կարապը . . . . . | 42 | » |
| Թութակը . . . . | 40 | » |
| Սագը . . . . . . | 30 | » |
| Բադը . . . . . . | 30 | » |
| Հնդկահաւը . . . . | 28 | » |
| Հաւը . . . . . . | 21 | » |
| Դեղձանիկը . . . . | 14 | » |



# XI ԳԻՒՏԵՐ

## ԽԵՂԴԻՉ ԳԱԶԵՐ

Գործօղ բանակից Պետրոգրադ է վերադարձել Վ. Վ. Ժուկովսկին, որ անձամբ ականատես է եղել գերմանացիների նոր մղձաւանջային զէնքի՝ խեղդիչ գազերի ներգործութեան:

— Ես,— պատմում է Ժուկովսկին,— տեսայ խեղդիչ գազերի ներգործութեան պատկերը հէնց հետեւեալ օրը, երբ գերմանացիները գործադրութեան էին դրել իրանց զէնքը։ Ես Գուչկովի հետ շրջեցի առաջին բանակի ճակատը Բզուրա և Ռաւկա գետերի մօտ։ Խեղդիչ գազերի ներգործութիւնը չափազանց ծանր է, որովհետև գազերը ներգործում են և խեղդելու միջով և՛ արիւնը վարակելու միջով, ըստ որում ներգործում են խիստ տարբեր կերպով, նայած մարդու անհատականու-

թեան։ Այդ նոր աւերիչ միջոցի պատճառած վնասները բուժելու համար բժիշկները գործ դրին ամեն տեսակ միջոցներ։ Օգտվեցին նաշատիրով, արիւն բաց թողին և սրսկեցին ֆիզիոլոգիական հեղուկ։ Ընդհանրապես բուժման միջոցը տակաւին չէ գտնված, բայց նրա առաջն առնելու միջոցը հաստատված է։ Բանը նրանումն է, որ գազերի ազդեցութիւնից պաշտպանվելու համար պետք է օգտվել որևէ հեղուկով, աւելի լաւ է սոդայով, որը կլանում է գազերը։ Ջրում լուծած սոդայի մէջ պետք է թաթախել սպունգ կամ բամբակ և մոտեցնել հիւանդին։ Այսպէս է ընդհանրապէս գազերի ֆիզիոլոգիական ներգործութիւնը, որ այրուածք է առաջացնում կոկորդում, թոքերի մէջ և գլխապտոյտ պատճառում։ Գազերի պատճառած ցաւերը խիստ դաժան են։ Մարդիկ շարունակ



խենթի պէս լալիս են ցաւից, որովհետև ցաւը սրտին էլ է ներգործում։

Խեղդիչ գազերը պատճառում են առաւել շատ տանջանքներ, քան ամենածանր վէրքերը։ Շատ ծանր է գազերի վնասակար ներգործութիւնը նաև չոր եղանակի, որ չոր տարածութեան մէջ խեղդիչ գազերը կարող են մնալ երկար ժամանակ և տարածվել բաւական մեծ տարածութեան մէջ։

Խեղդիչ գազերի նշանակութիւնը կայանում է գլխաւորապէս նրանում, որ դրանով մարդիկ են ընկնում շարքերից։ Իսկ նրանից վնասները, չընայած տաժանելի լինելուն, առանձին ուժով աչքի չեն ընկնում։ Դրանով մահացութեան դէպքերը 15%-ից չեն աւելանում։

Այնուամենայնիւ մեր թշնամիների նոր միջոցը իր արտաքին ներգործութեամբ և վնասաբեր հետևանքներով խիստ ծանր տպաւորութիւն է թողնում։ («Р. У.»)

## XII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Ըստ Ամերիկական լրագիրների տեղեկութեան մինչև 1915 թ. մայիսի 31-ին թշնամի պետութիւնների կորուստը հետևեալ թուերն է տալիս.

Գերմանիան — 1.630.000 սպանուած
1.800.000 վիրաւոր
490.000 գերի
ընդամենը 4 միլիոն։

Աւստրիան — 1.610.000 սպանուած
1.865.000 վիրաւոր
910 000 գերի
Ընդամենը 4.385.000

Թաճկաստանը — 110.000 սպանուած
144.000 վիրաւոր
95.000 գերի
Ընդամենը 349.000

—



## XIII. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Համաշխարհային նշանաւոր անցքերի և պատմութեան։

Քրիստոսի ծննդից առաջ։

12000 Աշխարհիս ստեղծագործութիւնը —ըստ եւրոպացւոց (թէև գիտնականները միլիոնաւոր տարիներ են հաշւում)։
5509 —Ըստ Աստուածաշնչի։
3246 Ջրհեղեղ.
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը։
1750 Բաբելոնի աշտարակաշինութիւնը
1651 Մովսէս մարգարէն ծնւում է։
1600 Ապակու գիւտը։
806 Արծաթ փողի գործածութիւնը։
384 Արիստոտէլը ծնւում է։
149 Արշակունեաց թագաւորութեան սկիզբը Վաղարշակից։
10 Հռոմ. հնարում են սապոն եփելը։

Քրիստոսից յետոյ։

Յիսուս Քրիստոսը ծնւում է։

34 Յիսուս Քրիստոսը խաչւում է։

» Հայերն ընդուն. են քրիստոնէութ.

41 Առաք. գրում են Ս. Աւետարանը։

257 Ս Գրիգոր Լուսաւորչի ծնունդը։

303 Ս. Էջմիածնի հիմնելը։

304 Պարսիկները ձեռնարկում են Թիֆլիսի Նարիգալայ բերդի շինութ.

321 Մարտի 7-ից սկսւում է Կիրակին տօնելը։

325 Առաջին տիեզերական Սր. ժողով.

328 Կ. Պօլսի հիմնարկութիւնը։

381 Կ Պօլսի տիեզերական Ս. ժողովը։

400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւն սկսւում է։

406 Մեսրոպը գտնում է հայոց գիրը։

431 Եփեսոս. երրորդ տիեզ. Սր. ժողովը

446 Վրացիք սկսում են գործածել մեր



Ս. Մեսրոպի հնարած այբուբէնը (խուցուրին)։

451 Քաղկեդոնի ժողովը։

451 Վարդանանց պատերազմը (յունիս)։

458 Վարդանի դուստր Շուշանիկը նահ. և թաղ. է Թիֆ. (Մետեխի բերդ.)։

551 Մովսէս կաթ. հրամանով Աթ. Տարօնացին յօրինում է եկեղ. տօմարը-

570 Մահմեդը ծնւում է։

597 Վրացիք հայերից բաժանւում են։

850 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելն սկսվում է։

862 Ռուսաց տէրութեան սկիզբը։

924 Բագրատունեաց թագ. սկիզբը։

1080 Ռուբինեանք նորոգում են հայոց թագաւորութիւնը Կիլիկիայում։

1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անուց Հռոմկլայ—Կիլիկ.

1173 Ս. Ներսէս Շնորհալու մահը։

1323 Անի քաղաքի կործանումը։

1338 Վառօդը գտնում են։

1365 Ասեղը հնարում են։
1380 Թնդանոթի գիւտը։
1384 Լենկթեմ. արշաւանքն Ասիայում։
1393 Հայոց թագաւորութ. վերջանալը։
1441 Կաթողիկոսական Աթոռը վերջնականապէս փոխադր. Ս. Էջմիածին։
1492 Կոլումբոսը գտնում է Ամերիկան։
1500 Ծոցի ժամացոյցը հնարում են։
1518 Պարսից Իսմայիլ-Շահն առնում է Թիֆլիսը և Մցխեթը։ Հալաբարի կամրջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Մակարիայի տօնավաճ. բացումն։
1552 Ամանների կլեկելը հնարւում է։
1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը։
1603 Շահ-Աբասի հայերին գերի տանելը Պարսկաստ.—(Ջուղայի գաղթելը)։
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը։
1779 Օդապարիկը հնարում են։
1785 Ծորժ Ստեֆենսոնն առաջին շոգեկառքը շինում է։



1795 Աղա Մահմադ խանը յարձակւում է Թիֆլիսի վրայ և աւերում։
1799 Վրաց Գիօրգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1800 Ջօնսոնը գտնում է մարմնի պատուաստումը։
1803 Շոգենաւի գիւտը։
1839 Տալբոթ անգլ. հնարել է լուսանկ.
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտոնից Բալտիմոր։
1848 Ելեքտր. հեռագիրը հնարում են։
1851 Առաջին ռեւոլվերը շինւում է։
1861 Ստրկութեան ոչնչացումը։
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1877 Էդիսոնը հնարում է ֆոնոգրաֆը։
1878 Սան-Ստեֆ. դաշնագրութիւնը։
» Բերլինի դաշնագրութիւնը որտեղ ստորագրւում են և Հայոց ինքնավարութեան 61-րդ յօդուածը։
1879 Ելեքտրակ. լամպերների հնարելը։
1880 Տելեֆոնի գիւտը։

1896 Հայկական կոտորածները Տաճ-
կաստանում։

1900 Իտալացի Մանկոնին գտաւ ա-
ռանց թելի հեռագիրը։

1905 Կովկասեան փոխարքայ գրաֆ-
կոմս Իլար. Իվ. Վարանցով-Դաշկո-
վի ժամանումն Թիֆլիս։

» Բարձրագոյն Հրաման Ռուսաս-
տանի սահմանադրութեան։

1906 Հայ-թրքական կոտորածը։

1907 Պարսկաստանում յայտարարւում է
սահմանադրութիւն։

1908 Տաճկաստանում սահմանադրու-
թեան հրատարակութիւնը։

1912 Բալկանեան պատերազմը։

1913 Համազգային 1500 տառերի գիւտի
և տպագր. 400 ամեայ յոբելեանը։

1914 Գերմանիայի ու Աւստրիայի պատե-
րազմը ընդդէմ Սերբիայի, Չեռնո-
գորիայի, Ռուսաստանի, Բելգիա-
յի, Անգլիայի, Ֆրանսիայի և
Ճապոնիայի։

1915 Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլ. յե-
վիչի Կովկասի փոխարքայ նշա-
նակւելը։



## ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐԸ

18 յունիսի. Սարայևի դէպքերը— Աւստրիական թագաժառանգի ու իր ամուսնու սպանութիւնը։

10 յուլիսի. Աւստրիան վերջնագիր է ուղղում Սերբիային։

12 յուլ. Ռուսաստանը առաջարկում է վերջնագրի ժամանակը երկարացնել։

Սերբիան պատասխանում է Աւստրիայի վերջնագրին, բաւարարութիւն տալով 10 կէտերի, անկախ թողնելով 2 կէտեր։

14 յուլ. Անգլիան միջնորդ դատարան է առաջարկում։

15 յուլ. Աւստրիան պատերազմ է յայտարարում Սերբիային։

16 յուլ. Ռմբակոծում են Բելգրադը։

17 յուլ. Ընդհանուր զօրահաւաք Ռուսաստանում։

18 յուլ. Գերմանիան վերջնագիր է ուղղում Ռուսաստանին։

19. Ընդ. զորաժողով Գերմանիայում։

Ընդհանուր զորաժողով Ֆրանսիայում։

Գերմանիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։

20 յուլ գերմանական զորքը անցնում է ֆրանսիական սահմանը։

Լյուքսենբուրգը գրավում են Գերմանացիք։

Բելգիան պատերազմ է հայտարարում Գերմանիային։

22 յուլ. Գերմանացիք մտնում են Բելգիա։

23 յուլ. Անգլիան պատերազմ է հայտարարում Գերմանիային։

24 յուլ. Ավստրիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։

26 յուլ. Ռուսաց Պետ. Խորհրդի ու Դումայի պատմական նիստը։



27 յուլ. Չերնոգորիան պատերազմ է հայտարարում Ավստրիային։

31 յուլ. Ֆրանսիան ու Անգլիան պատերազմ են հայտարարում Ավստրիային։

7 օգոստ. Գերմանացիք գրավում են Բելգիական Բրյուսել քաղաքը։

10. Ճապոնիան պատերազմ հայտարարեց Գերմանիային։

7 հոկտ. Բելգիական կառավարությունը տեղափոխվեց Ֆրանսիայի Հավր քաղաքը։

19. Տաճիկները դավաճանորէն յարձակվում են Ռուսաստանի Սև ծովի, ծովեզրեայ քաղաքների վրայ։

20. Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան պատերազմ են հայտարարում Տաճկաստանին։

21. Դաշնակիցները սկսում են ռմբակոծել Դարդանելի ամրությունները։

24. Ճապոնացիք գրավում են Ցին-Դաոն։

Տաճկաստանում սկսվում է խառնութիւններն ու կոտորածը հայերի դէմ։

26 Սկսվում է հայերի ողբալի գաղթականութիւնը։

23 Նոյեմբ. Գերմանացիք գրաւում են Լոձ քաղաքը։

4 դեկ. Տաճիկների պարտութիւնը Սարաղամիշում։

1915 թ.

22 յունվ. Սուէզեան ջրանցքի մօտերքը ճակատամարտ։

8 փետր. Գերմանացիք պաշարում են Անգլիայի ափերը։

2 մարտի, Ամբողջ Տաճկաստանում սկսվում է գլխովին հայերի բնաջընջման սրտաճմլիկ գործողութիւնները։

19. Ռուսաց գրահակիր նաւերը, ռմբակոծում են Բոսֆորը։

5 ապրիլի, Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ը Տաճկահայերի բնաջնջման առթիւ պաշտպանութեան խնդրով դիմում է մեծ պետութեանց։



24. Գերմանացիք խորտակում են «Լուզիտանիա» շոգենաւը։

25. Գերմանացիք գրաւում են Լիբաւան։

6 մայիսի. Ռուս-հայկական բանակը մտնում է Վան։

11. Իտալիան պատերազմ է յայտարարում Տաճկաստանին։

23 օգոստ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը նշանակվում է Կովկասի Փոխարքայ և Կովկասեան զօրքի ու ռազմաբեմի ընդհանուր հրամանատար։

25. Գերմանացիք գրաւում են Վարշաւը։

10 հոկտ. Բուլղարիան պատերազմ է յայտարարում Սերբիային։

7. Ֆրանսիան, Անգլիան ու Ռուսաստանը պատերազմ են յայտարարում Բուլղարիային։

8. Աւստրո գերմանական զօրքը գրաւում է Բելգրադը։

# XIV ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

## ա) ԳՆԵՐԸ *)

| | II դ. | III դ. |
|---|---|---|
| Թիֆ. աւզ. Մոսկուա | 24—40 | 15 ր. |
| » » Ս. Պետերբ. | 27 ր. » | 18 » |
| » » Վարշաւ | 26 » » | 18 » |
| » » Պոդվոլոչինսկ | 25 » » | 17 40 կ |
| » » Ալէքսանդրօվօ | 28 » » | 18 50 « |
| » » Վլադիվոստ. | | |
| » » Ռոստով (Դոնի) | | 13—70 |
| Վլադիկաւկազ. Պետեր. | » » | 14 40 կ. |
| Պետերբուրգից Պարիզ | 60 » | 37 35 կ. |
| Մոսկուայից Պարիզ . . | 68 " | 38 » » |
| Բագուից Կիսլաւոդսկ | 12 80 | » » » |
| Բաթ.—Բագու մճա- քամեն . . | 11 ր. 10 կ. | 7 ր. 40 կ. |
| Թիֆ.—Գորի . | 1 » 53 » | 1 » 2 » |
| « Միխայ. | 2 » 43 » | 1 » 62 » |
| » Քութա. | 4 » 8 » | 2 » 72 » |
| » Փոթի | 5 » 21 » | 3 » 47 « |
| » Բաթում | 6 » — » | 4 » — » |

---

*) Վերջերս հարիւրին 30 % այս գներին աւելացրած է.



# ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

## ՍԱՐՂԱՄԻՇԻՑ—ՍԻՎԱՍ (723 վ.)

| | |
|---|---|
| Ղարաղուրղան . . . . | 34 վ. |
| Զիվին . . . . . | 6 » |
| Զանջակ . . . . . | 17 » |
| Արդոս . . . . . | 5 » |
| Քէփրիքէօյ . . . . | 24 » |
| Հասան-Ղալա . . . . | 13 » |
| Ղուրջուլու . . . . . | 17 » |
| Կարին . . . . . | 20 » |
| Աշաւար . . . . . | 21 » |
| Քոչուկ Քափդարիչ . . . | 23 » |
| Թերնահաբան . . . . | 24 » |
| Խան-մաղէն . . . . | 26 » |
| Բայբուրդ . . . . . | 20 » |
| Ուրաշտի . . . . . | 23 » |
| Կուրլուկլեա . . . . | 15 » |
| Ուշլու-Շէհրան . . . . | 33 » |
| Զիրանդի . . . . . | 45 » |
| Մէրչմէկ . . . . . | 20 » |
| Շեբին-ղարահիսար . . . | 32 » |
| Ենդէրաս . . . . . | 29 » |

| | | |
|---|---|---|
| Ինօու | 29 | » |
| Դեթիու-գիւոլ | 23 | » |
| Սամայիլ | 27 | » |
| Բաղի-քէօրպու-Կամուրջ | 26 | » |
| Ֆոնտան | 15 | » |
| Թոխատ | 50 | » |
| Նարտիշ | 23 | » |
| Էրղիունէր | 14 | » |
| Նէլի-խան | 19 | » |
| Մէիթէլ | 22 | » |
| Սիվաս | 32 | » |

12) ԻԳԴԻՐԻՑ—ՎԱՆ (229 վ.)

| | | |
|---|---|---|
| Օրգովակ | 14 | վ. |
| Զինգել | 12 | » |
| Ղարաբուլաղ | 6 | » |
| Բայազէթ | 51 | » |
| Ցամարջիկ | 23 | » |
| Զօրան-Եզիդ | 22 | » |
| Շաթր-քեանդ | 28 | » |
| կերգան-ղալա | 23 | » |
| Միւրաք | 30 | » |
| Ռեաչանի | 24 | » |
| Վան | 28 | » |



ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ.

16) ԷՆՁԵԼԻՑ—ԹԷՀՐԱՆ (292 վ.) վ.

| | | |
|---|---|---|
| Պիրբազար | 15 | » |
| Ռաշտ | 8 | » |
| Մէնջիլ | 65 | » |
| Ղազվին | 69 | » |
| Թէհրան | 135 | » |

17) ԹԻՖԼԻԶԻՑ ԹԷՀՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Բագուով | 1149 | վ. |
| Ջուղայով | 1135 | » |

18) ՆՈՐ-ՋՈՒՂԱՅՈՎ ԹԷՀՐԱՆ (674 վ.)

| | | |
|---|---|---|
| Մարանդ | 60 | » |
| Թաւրիզ ք. | 68 | » |
| Թուրքմանչայի | 110 | » |
| Միանէք | 30 | » |
| Զէնգեան | 116 | » |
| Սուլթանիէ | 35 | » |
| Ղազվին | 120 | » |
| Թէհրան | 135 | » |

# ԿԱԽԷԹԻԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

1915 թ. օգոստ. 1-ից կանոնաւոր ամեն օր երթեւեկում է II և III կարգի վագոններով Թիֆլիզից դուրս գնալով առաւօտեան ուղիղ 8 ժ. 58 րոպէ (ըստ Թիֆլիսի ժամանակի) և հասնում է Թելաւ 5 ժ. 35 ր. երեկ.: Իսկ Թելաւից դուրս է գալիս նոյնպէս 5 ժ. 58 ր. առաւօտ. և հասնում Թիֆլիս 5 ժ. 1 ր. երեկոյեան։

| | հասնում է | գնում է |
|---|---|---|
| Թիֆլիս . | — | 8 ժ. 58 ր. առ. |
| Նաւթլուխ | 9 ժ. 13 ր. | 9 — 23 |
| Նաւթլուխ Կախէթի . | 9 — 28 | 9 — 43 |
| Ղարիանի . | 10 — 37 | 10 — 42 |
| Իորա . | 11 — 30 | 11 — 35 |
| Սագարէջօ . | 12 — 07 | 12 — 17 |
| Բադիաուրի | 1 — 09 | 1 — 15 |
| Մելանի . | 2 — 32 | 2 — 37 |
| Գուրջաանի | 3 — 53 | 4 — 08 |
| Ղաշնաձիանի | 4 — 48 | 4 — 53 |
| Թելաւ . . | 5 — 36 | — — |

# ԵՐԱԶԱՀԱՆ

Ինչ է երազը.—Ֆրանսիացի գիտնական Դելօնէն երազների կանոնաւորութեան մասին.—Մեր կարծիքը ժողովրդական երազահանի մասին։

Ի՞նչից է առաջանում երազը, կամ երազում տեսած ամեն մի առարկայ ի՞նչ է գուշակում—դեռ մինչև օրս ոչ ոք ճշտօրէն բացատրած չէ։ Թէև ՚ի հնուց յետ է զանազան ժամանակներում եղել են երազների յայտնի բացատրողներ և մեկնիչներ, ինչպէս մեր այս տեսութեան վերջի մասում զետեղած երազների գուշակութիւնը, բայց քանի որ այդ գուշակութիւնները գիտութեան հիմնական փորձերով և ուսումնասիրութեամբ չէ բացատրուած, ի հարկէ դժուար է հաւատ ընծայել։ Երազի և տեսիլքների բացատրութիւնը, գիտութեան համար յայտնի նշանակութիւն ունենալով—ինչպէս հետևեալ գրուածքից կերևայ—շատերն այժմ քննութեան առարկայ են շինել

ն ամէն մի մասնագէտ-գիտնական իւր տեսակէտից է քննում և հասկանում ե-րազն ու տեսիլքը, այսպէս օրինակ.

Բնագէտը — այդ քննում է մարդկային մարմնին համապատասխանող և բնա-կան օրէնքներին հպատակուող երևոյթ-ների տեսակէտից։

Բ ժ ի շ կ ը — համարում է մարդկային մարմնի գործարանների կանոնաւոր կամ անկանոն գործողութեանց արգասիք։

Հ ո գ ե բ ա ն ը (պսիխոլօգ) բացատ-րում է քնի ժամանակ, մարդու մարմնի մէջ գտնուած անյայտ գոյութեանց տեսակէտից, ինչպիսին են խելքը, հո-գին և այլն։

Իսկ մագնիտիզմով և հիպնոտիզմով պարապողները, երազի երևոյթը մի այլ տեսակ վճռելով և ընդունելով նրանց տարբեր հայեացքներն ունենա-լու համեմատ էլ բացատրում են երազը Նշոյլով եթէ որ քունը և երազը մի



անգամից և միակերպ մինչև օրս դեռ չեն կարողացել բացատրել և վերջ դրել զանազան տեսակ կարծիքներին և մեկնութիւններին, եւ առաւել դժուար է տեսիլքների և անուրջների պարզա-բանութիւնը։ Ներկայումս մեծ մասամբ հաւատ են ընծայում բժիշկների ընդ-դիմախօսութեան, որոնք հեշտ կարո-ղանում են արհեստական քուն և երազ առաջացնել ուղիղ այնպէս, ինչպէս ոչնչացնում են ամբողջ քնաբերութիւ-նը։ Մագնիսացնողն եւ ուղղակի քնաց-նում է մարդուն առանց դեղատան օգնութեան դիմելու (շարժուածքով ձեռքերով և աչքերով) և միայն իւր ազդեցութեան շնորհիւ գրգռում է ու թմրացնելով անզգայացնում։

Մինչև օրս եղած քննութիւններից նաև երևում է, որ երազներն, անուրջները ու տեսիլքները միշտ զանազան տեսակ են լինում, նայած մարդու կարողու-

թեանը, կազմուածքին, նիստ ու կացին և մարգկային խառնուածքների համեմատ, տարբերւում են միմեանցից և բնաւորութեան նշաններով. օրինակ, բարկացող մարդը՝ երևակայում է զարհուրելի կռիւներ, պատերազմներ և այլն։ Մելամաղձոտը՝ ձորեր, անտառներ և տխուր տեսարաններ։ Մաղառոտ՝ հեզաբարոյ մարդուն երևում է անձրև, ծով, ջուր, ձկներ, անտառներ։ Արիւնային խառնուածք ունեցողին (songvinist) զուարճալի տեսարաններ։ Այսպէս, երազները հետևանք են լինում զանազան և անթիւ տպաւորութիւնների։

Մի քանի աստղագուշակներ էլ պնդում են, թէ ինչպէս արևը, լուսինը և այլ մոլորակներն իրանց դրութեամբ շարժումով ազդեցութիւն ունեն երկրագընդի՞ վրայ, այնպէս էլ ասում են նրանք, որ երազն էլ կախուած էլ նը-



րանից թէ ինչն է ազդում քնածին, ուսինը թէ արևը. Նրանց կարծիքով լուսինը հովանաւորում է քնածներին այն ժամանակ, երբ արևը հակառակ է քնին, բայց երբ թէ չի դադարում մարմնի վրայ բարերար ներգործութիւն անելուց։

Շատերն ասում են—ինչպէս էլ հընումը—որ քունը նման է մահուան, իսկ տեսիլքը կամ անուրջը մեր կեանքի ուղղութեան մի ինչ-որ տեսակն է։

Այսպիսի եղելութիւններին պէտք է վերագրել ամեն ժամանակի և շատ ազգերի պատմութիւններից յայտնի տեսիլքների երևոյթները, որոնք շատ անգամ ուղիղ նախագուշակում էին աղէտներ և ուրախութիւններ։ Այս պատճառով էլ հին ժամանակներում թագաւորներն ունէին իրանց գուշակող-խորհրդատուներն, որոնք անուանւում էին պալատական աստղաքէտներ, աստղագուշակներ և մեկնիչներ։

Շատ նոյնանման օրինակներ կարող էինք բերել այստեղ՝ եթէ թոյլ տար մեր այս հրատարակութեան չափը։ Բայց ժամանակը և գիտութիւնը դեռ շատ բան կասեն այս խնդրի վերաբերութեամբ, որ մեծամասնութեանն այսքան հետաքրքրական և դեռ եւս անմատչելի գաղտնիք է։

Իսկ երազների կանոնաւորութեան մասին Ֆրանսիացի գիտնական Դելօնէն իր վրայ գործ դրած փորձերից համոզուեց, որ երազը ուղղակի նրանից կախում ունի, թէ քնած ժամանակ ուղեղի որ մասն աւելի է տաքանում։ Օրինակ երբ իր ճակատը ծածկում էր բամբակով, այդ ժամանակ քնում էր հանգիստ և կանոնաւոր։ Երբ գլխի ետևի մասն էր տաքացնում, զարմանալի և անհանգիստ երազներ էր տեսնում. Ճախակողմը տաքացնելու՝ Ֆանտաստիկական երազներ, ո-



րոնց մէջ երևում էին վաղուց մեռացած տեսարաններ և պատկերներ. Իսկ աջակողմը տաքացնելուց երազները աւելի՞ հանգիստ, խելացի և այնպիսի տեսարաններ էին ներկայացնում, որոնք մօտիկ անցեալին էին վերաբերում։

Վերջացնելով այս տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել, որ թէև մենք համամիտ չենք հետևեալ երևոյթներում զետեղուած երազների առանց լիովին հաստատ բացատրութեանը, բայց ուսումնասիրութեան տեսակէտով քննելու արժէ—դարերով ժողովրդի գործածութեան մէջ մտած—նրա հետաքրքրութիւնը շարժող—ընթերցանութեանը նպաստող և գրաւչ նիւթ՝ մենք հրատարակում ենք։

Մ. Զ. . . .

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

### Զանազան տեսակ երազների մասին

### Ա.

Աստուած.—Երազում Աստծուն տեսնելը՝ իբր թէ տեսնողի համար լաւ է բոլոր չարերից կազատուի. թէ աղքատ լինի կը հարստանայ, հիւանդ լինի կառողջանայ։ Երազում Աստծուն տան մէջ տեսնելը՝ նորոգութիւն է։

Աստղ.—Աստղ տեսնելը լաւ է. եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Եթէ շատ աստղեր ճանապարհ կը գնաս և կը շահուես։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Արեղայ տեսնելը՝ յարկ, պատիւ կամ կոչիւ է։

Աքաղաղ.—Զոհած աքաղաղը՝ բարի է և կռուի նշան։

Ագռաւներ.—Թշնամիներդ կը յարձակուեն ձեզ վրայ։

Աթոռ տեսնելը մեծութիւն է։



Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալեւոր.—Իրան ծերացած տեսնելը հարստութիւն է։

Ալիւրը շահ և ուժ է։ Ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

Ականջը.—աղջիկ է, կնիկ և կամ աչքալուսանք։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես։ Աղուէսը, որ մարդուց փախչի—պարտականն էլ կը փախչի իրենից։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կ՚անի

Աղջիկ.—աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը օգուտ է։

Աղբիւր.—Երազում աղբիւր տեսնելը շատ բաներից օգտուել է նշանակում. աղբիւրի վրայ լուացուելն՝ օգուտ է։ Աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։

Աղ.—Աղ և անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնե-

ելը կոկիծ է, սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք և տրտմութիւն է. կոտրտած աղը՝ կռուի խափանում է։

Աղի ձուկը՝ հոգս է։

Աղեղն.—Աղեղ տեսնելը՝ զրոյց ճոշք է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը թշնամանող լեզու է։

Աղիւս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը՝ բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը ճշմարտութիւն է։

Ամբաստանել մէկին՝ շատ վնաս է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած.—Այրուած հանդերձը՝ (շորը) երկիւղ է։ Այրուած և սևցուած տեսնել իր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անուշ ուտելիքը՝ լաւ է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։



Աչք տեսնելը՝ փողի շատութիւն է։

Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։

Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել երազում, վատ դէպք է։

Ապարանջանը նեղութիւն և հոգս է։

Առիւծ.—Երազում առիւծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինես՝ իշխանութիւն է։

Եթէ Առիւծը՝ դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու.—Տանդ մէջ առու տեսնելը գանձ և օգուտ է։

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ճանապարհ կը գնաս։ Առաջին ատամները հանելը վատ է։ Ներքին ատամներ հանելը տրտմութիւն է, իսկ եթէ վերը հանես

ազգականներիդ վնաս է։ Սևացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ.—Երազում արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իւր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնող պարոնի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։ Արեգակ (մէկ) տեսնելը նեղութիւն է. արեն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ.—Արծիւ տեսնելը՝ աւագութիւն է։ Արծուի վրայ որ նստես՝ պարոնութեան կը տիրանաս։ Արծուի հետ որ կռուես՝ կամ խփես՝ մեծ մարդկանց կը նախանձես և հետները կը կռուես։



Եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից զէնք կ՚ստանաս։

Արջ տեսնելը՝ անիրաւ և տգէտ մարդու խօսք է։ Արջից հալածուելը՝ կռուից վտանգաւոր կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը՝ մուրազ է։

Աւազանը՝ առճիկ և օգուտ է։

Աւազը որ ձեռդ ածես՝ մեծ մարդուց բան կը ստանաս։

Աւազակ որ տեսնես՝ զգուշացիր կռուից։

Աւագ.—Իրան աւագ տեսնելը՝ շատ լաւ է և բարի։ Աւագ որ տեսնես՝ թըշնամին երկրի վրայ կը յարձակուի։

Աւերք.—որ է Սուլուխ՝ շատ գանձ է։

Բ. Բարձրանալ երազում և վայր ընկնել, Ձկի ձեռքով՝ վնաս է։

Բարձր տեղերի վրայ եթէ քայլես, մեծութիւն կը գտնես։

Բարձր տեղից ընկնելը՝ վնաս է։

Բարբառոտի և ուրիշ ազգերի ձայնը՝ անոյշ խօսք է։ Բարև տալը՝ կախ է։

Բաղանիքը՝ հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խաբէութեան մէջ կ՚ընկնես. Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից կազատուես։ Բաղանիքում լուացուելը առճիկ և մեծ նեղութիւն է։

Բադ տեսնելը՝ մեծ մարդ է։

Բաց շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բառը լեզու է։

Բամբակն՝ արդարութիւն է։

Բանջարը՝ շահ է։

Բերդ որ տեսնես՝ թշնամիներից մաճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը՝ պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը՝ առճկի պակասել է։

Բիր տեսնես՝ կամ առնես՝ եղբայր կամ որդի է։ Բիր կտրելը՝ եղբօր կամ ազգականին վնաս գայ։

Բլուր տեսնելը՝ երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը՝ նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը՝ լա-



է, կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը՝ առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը՝ տրտմութիւն է։

Բոբիկ իրեն տեսնելը՝ զէնք կը գոյ թւր վրայ։

Բորոտ.—Իրեն բորոտ տեսնելը՝ գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ուտելը՝ առողջութիւն և օգուտ է։

Բրել կամ գործել, բարի և շահ է։

Գ. Գառներ տեսնելը՝ մեծ շահ է։

Գառներ մորթելը՝ լաւ չէ. գառներ լուանալը՝ զէնք և տրտմութիւն է։

Գազան տեսնելը՝ առանց վնասի կռիւ և երկիւղ է։ Գազանի խաղալը՝ թշնամու հաշտութիւնն է, իսկ փախչելը խաղաղութիւն։

Գանձ տեսնել կամ առնելը՝ շահ է։

Գարին՝ բաղդ կամ բաժին է։

Գայլ սպանես՝ թշնամուդ կը յաղթես. գայլի վրայ նստես՝ նեղութիւն է։

Գաւազան որ տեսնես՝ թշնամուդ դէմ կ՚ամրանաս։ Գաւազանը ձեռքիդ՝ լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը՝ զաւակի (ունենալու) խնդութիւն է։

Գետ.—Գետ անցնելը՝ ձի հեծնել է։ Յստակ ու պարզ գետին մօտիկ տալը՝ ազատութիւն է, պղտորը՝ լռութիւն է. գետում լուացուիլը նեղութիւն է։ Գետում վերևից ներքև գնալը՝ պարտութիւն է։

Գերի տեսնելը՝ նեղութիւն է. իրեն գերի տեսնելը՝ մեծութիւն և շահ է։

Գերի.—Ճանապարհ գնալ՝ նեղութիւն է։

Գերանը որ կոտրուի՝ տանուտէր կ՚մեռնի։

Գերեզման բացելը՝ վնաս է.—Իրան գերեզմանում տեսնելը՝ պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է։

Գեղեցիկ պատկերը նկարած տեսնել՝ փառք է։

Գէշ հոտը՝ գէշ խօսք է։

Գինի խմել կամ գնել՝ ոյժ և շահ է։

Գինձը՝ անուշ խօսք է։ Գինձ ուտել



կամ ժողովելը՝ կռիւ է։ Գինձ հագնելը մեծ շահ է։

Գիսաւոր աստղը՝ մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը՝ ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը՝ բարի և մուրազ է։

Գլուխ.—Կտրած գլուխ ձեռին առնելը՝ շատ գանձ գտնել է, գլխին դեզ գցելը՝ անուշ խօսք է, գլուխ ածելել տալը՝ նեղութիւնից ազատուել, ուրիշների գլուխն ածելելը՝ ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը՝ շէնք է։ Նոյնպէս գլուխը յանկարծակի մնաս։

Իրեն գլխատուած տեսնելը՝ մեծ վնաս է։

Գլխատոր տեսնելը՝ ցոյց է տալիս [illegible] ծուլութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը՝ մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն՝ վատ։

Գոմէշ.—Գետի մէջ գոմէշ տեսնելը՝ բարի զրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը՝ ուրախութիւն է։

Գործի ձայն լսելը՝ ուրախութեան խօսք է։ Գործ ընել սպանես՝ հաստատցնել մարդու հետ հաշտութիւն կանխեց։

Գլխարկ ծածկելը՝ հարկիք է։

Գրաւական հանելը՝ իր տանից վնաս է։

Գրող տեսնելը՝ վատ է։

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը՝ կին է։

Դ. Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, բայց վատ լեզուն խափանել է։

Դաշտ՝ անու բան կ'առնես։

Դաշտից որ դուրս գաս՝ ազատութիւն է։

Դատաւորն՝ Աստուած է և դրութիւնըդ կ'լաւանայ։

Դատաստանը՝ մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը՝ հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելը՝ մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն



թէ ինքդ անես, լաւ տանտէր կը լինիս
Դարբնի հարուածը, ամենը բարի է։

Դեղին գոյնը՝ բոլորովին վատ է։

Դեղ՝ նեղութիւն և մեղաց նշան է։

Դգում ցանելը՝ ջերմ, իսկ ուտելը հիւանդութիւն է։

Դիակ՝ բարի գրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը՝ մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դուռը՝ պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը՝ իր բաղդի բացուիլ և իր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը՝ կործանումն։ Դուռ կոտրելը վատ նշան է։ Դուռը դուրս գալը՝ լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելն՝ ագահութիւն է։

Դպրանոցին բարև տալը՝ կախ է։

Ե. Եզն՝ անի մէջ գնայ։ Եզը նստած տեսնես՝ մեծ աւետիս է կամ ափթեմդ կը գայ։ Եզան միս ուտելը՝ լաւ է

բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։ Եղների կռուելը՝ թշնամի է։ Եզը մորթել՝ վնաս է։ Եզ ուտելը՝ բարի է։

Եզնիկը տանը տեսնելը՝ սիրելին գալ։

Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է։ —Եկեղեցի երթալ ազատութիւն է։

Եղջերուն՝ երկրի նեղութիւն է։

Երգեհոնը՝ տխրութիւն է։

Երկինք բարձրանալը՝ մեծ պատիւ է

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը՝ տրտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը՝ վնաս է։ Երակից արիւն առնելը՝ արբութիւն է։

Երես լուանալը՝ զէն է։—Դեղին երեսը մեղկ է. կարմիր երեսը՝ գործը լաւ կերթայ.—Գեղեցիկ երեսը՝ մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է։

Երեցը յարութիւն առնելիս՝ հինգրոյց է։ Մեռած ապա էրեցին կենդանացած տեսնելը՝ մեծ զրոյցի նորոգութիւ



է։ Երէցին մեռած տեսնել՝ մեծ զրոյցի խափանումն է։ Երէցի գրիչ տեսնելը՝ խելք ու ճանապարհ է։

Զ. Զանգակի ձայն լսելը՝ խնդութիւն և ուրախութիւն է։

Զաֆրանը՝ հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը՝ լաւ է։

Զենելը — մորթելը՝ մեծ նեղութիւն է։

Զինուորը՝ տրտմութիւն է։

Զմրուխտը լաւ է։

Զնդանը մեծ հոգս է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը՝ նեղութիւն է։

Զրահը՝ վատ է։ Զրահ հագնելը՝ զէն է։

Է. Էշը՝ շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բեռած՝ բարի է և պատիւ.

Ը. Ըշունգ ունենալը՝ աղքատութիւն է։ Ընկոյզ ժողովելը՝ լաւ չէ։

Թ. Թագաւորին ողջունելը՝ փառք է։

Թամք շինելը՝ իրաւարար է։

Թանաք եփելը՝ լաւ է։ Թանաք վեքեից թափելը՝ վատ խօսք է։

Թարախով իրան տեսնելը՝ շահ է և հարստութիւն։

Թագնուած իրան տեսնելը՝ բարի է։

Թեւաւոր իրան տեսնելը՝ հոգիների հանդիպել է։

Թիւր բանը՝ նեղութիւն է։

Թղի ծառը՝ լիքը մարդ է.—Թուզը (կանաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզ (չոր) ուտելը՝ շահ է։

Թուխ իրան տեսնելը՝ մեծութիւն է։

Թռչելը՝ ուրիշ տեղ գնալ է։ Թռչել կտրից՝ այլ կին առնել է նշանակում։

Թռչել բարձրանալու համար՝ լաւութեան հասնել է. Թռչելիս՝ ուրիշ երկրում մեծութիւն կ'ստանայ։

Թռչունի քեզ մերձենալը՝ մի անձն երանի է տալիս քեզ. Թռչուն արձակելը՝ բարութիւն է. Թռչունի փախչելը՝ վնաս է։

Թռչունների կռուելը՝ վնաս է։ Թռչունի հետ խաղալը՝ թշնամիքդ կ'սիրեն քեզ։

**Ժ.** Ժամատունը եթէ զարդարած տես-



նես՝ արքայութեան արժանի կը լինես։

Ժամ գնալը՝ կեանքդ բարի լինել է։

Ժամատանը աղօթելը՝ լաւ բան անել է։

Ժամհարը՝ վատ գրութեան կըհասնես։

Ժուռ գալը՝ լաւ չէ։

Ժամացոյցը՝ օգուտ է։

**Լ.** Լոյսն.—աշխարհի խաղաղութիւն է. —հանգած լոյսը տրտմութիւն է։

Լուսին—և արեգակն աստուծեան տեսնելը՝ ազգին վնաս է։

Լուսնի աստղը՝ խիստ շահ է.—կարմիր լուսինը՝ վնաս է։

Խաւար լուսինը՝ թագաւորի մահ է.—երկու լուսին տեսնելը՝ թագաւորներ իրար դէմ կը վերկենան։

Լուն՝ առճիկ է։

Լուծը՝ (եզների) բարի է։

Լեառն (բարձր) որ տեսնես՝ ազատութիւն է։

**Խ.** Խան կամ սուլթան տեսնելը անչափ լաւ է

Խաչակնքել երազում մեծ պատիւ է։

Խաչը՝ չարչարանք է։

Խաւարը՝ նեղութիւն է։

Խաւեարը՝ հիւանդութիւն է։

Խաղողը՝ անձրև և ցնորք է.—սպիտակ խաղողը՝ խնդալ է։ Սևը՝ լաւ է. ժողոված խաղողը՝ գանձ է։

Խալահանդերձը՝ իշխանի մահ է։

Խեցեղէն աման բռնելը՝ ուրախութիւն է։

Խմոր ունելը՝ շահ է։

Խնդալը՝ լաւ չէ։

Խնձորը՝ տղայ է, իսկ ունելը՝ շահ.—խնձոր առնելը՝ բարի համբաւ է.—խընձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը՝ շահ է։

Խունկ ծխելը՝ ապրանք և անուշ խօսք է

Խորոված միս ունելը՝ շահ է։

Խոզը՝ այլազգի է.-խոզի միս ունելը՝ ազգականների մահ է։

Խոտը՝ լաւ մարդ է.—խոտ ժողովելը պատիւ և փառք է։

Ծ. Ծաղիկ.—Ծաղկեայ անդաստանը՝ կանանց ուրախութիւնէ.ծաղկին անհանգստութիւն. է ծաղիկ քաղելը՝ կին առնել է. ծաղկելը՝ բարի է։

Ծառ.—Ծաղկած ծառը—պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը վնաս է. ծառը եթէ ծխի՝ լաւ չէ. ծառի



տերև թափուելը՝ արիւնհեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդուն վատ է. մեծ ծառ կտրելը՝ մեծ մարդու մեռնիլ է.ծառի վրայ նստելը՝ և մանգալը՝ փառք է. կանաչ ծառը՝ գանձ է. չոր ծառը՝ տրտմութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը՝ բաժանումն է։

Ծառան՝ աւետիք և խնդութիւն է։

Ծարաւելը՝ բարի չէ։

Ծանր բան շալակելը՝ մեծ մեղք է։

Ծիծաղելը՝ տրտմութիւն է։

Ծիծը՝ տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը՝ (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը՝ առ Աստուած յոյս է։

Ծով.—պղտոր ծովը՝ նեղութիւն է. ցամաք ծովը՝ աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը՝ շահ է. ծով մտնելը թշնամիներից կարդարանաս. ծովը որ մարդու ներս քաշի՝ գողի ձեռքով սպանուիլ է նշանակում։ Ծովակի վրայ նըստելը՝ զուարթութիւն է. ծովից դուրս գալը՝ պատիւ է և ազատութիւն,—չը դուրս գալը՝ մեծ վնաս է։

Ծեր.—ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը՝ կեանքի աւելանալն է։ —Իրան ծեր տեսնելը մանկութեան ժա-

Հոնակ՝ նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ. Կամուրջ շինելը. շատ լաւ է։

Կաք նստելը՝ մեծ պատիւ է։

Կաղամբի տակ հանելը՝ վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Կին առնելը՝ վնաս է. կնոջ հետ խօսելը՝ տրտմութիւն է. մազերն արձակած կինը՝ նոյնպէս վնաս է. գեղեցիկ զարդարած կինը՝ երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը՝ շատ վնաս է. կնոջ նայիլը՝ բարի և լաւ է։

Կիտրոնը՝ անոյշ խօսք է։

Կոյս.—իրան կոյս տեսնելը՝ խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է։

Կուժը՝—որդի է. ջրով կուժը՝ բոլորովին բարի է։

Կորեկը տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է։

Կրակ ձգելը՝ սով է։

Կտաւ հանելը՝ բարի չէ։

Կայծակը՝ խռովութիւն է։

Կարկուտը՝ երկրի նեղութիւն է։

Կարասը՝ նեղութիւն է։



Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը ճանապարհ է։

Հ. Հաց տեսնել՝ երազում բարի է և լաւ։

Հաւ.—հաւը ձուի վրայ՝ անակնկալ շնորհք է. հաւ-սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելն է։

Հաղորդ առնելը՝ մարդու ծեծ է։

Հասկ քաղելը՝ ուրախութիւն է։

Հարսանիքը՝ տրտմութիւն է։

Հայրապետը՝ մեծ զրոյց է։

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնել՝ մեծ շահ է։

Համր և խուլը՝ շահ է։

Հալւա այրած տեսնելը՝ կնոջից շահուել է։

Հանդերձ կորցնելը՝ վնաս է։

Հեռաւոր տեղ իրան տեսնել՝ կա ուրիշ մէկին շահ է և բարի։

Հիմք ձգելը՝ հարստութիւն է։

Հիւանդը՝ նեղութիւն է։

Հող վեր առնելը՝ նեղութիւն է։

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։

Հոր փորելը՝ շատ նեղութիւն է։

Ձ. Ձի.—սպիտակ կամ սեւ ձի նստելը՝ ջրբէ է և պատիւ. վազող ձի նստելը շատ լաւ է. սեւ ձի կամ ջորի նստելը նմանմեծներից շահ ստանալ է։ Ձին սատակ տեսնելը՝ մեծութեան հասնելու նշան է։

Ձեռը լուանալ՝ բարի է. ձեռքդ ճըրբոգ բանած՝ որդի լինի քեզ։

Ձէթ եփելը՝ մուրազ և լաւ է։

Ձու տեսնել կամ ժողովելը՝ կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ'ազատուես։

Ձուկը՝ չար լեզու է.—Ջրից հանես, ամպ, ձիւն կամ Ջերմ կ'լինի. ձուկը կրակին տեսնես՝ երկրի նեղութիւն է։

Ղ. Ղամպար վառելը՝ բարի է։

Ճ. Ճանապարհ գնալն ու գալը բարի է։

Ճաշն՝ երկայն ճանապարհ է։

Ճաշ՝ գրած տեսնել կամ լսել՝ հոգս է։

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը՝ բարի է։

Ճրագ վառած՝ ծածուկ գործ կ'յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

Մ. Մատանի.—մատանին իշխանու-



թիւն է. մատանին կտրած՝ միաս է. մատանին կորցնես՝ կինդ կամ սիրելիդ կը վնասուին. երկու մատանի ունենալը երկու կին կ'առնես. արծաթի մատանի՝ նեղութիւնից ազատուելու նշան է։

Մարգարիտը՝ մեծութեան նշան է։

Մարդու լերդ ուտելը՝ գանձ գտնել է. մարդու ոսկոր ուտելը՝ բանտ մըտնել է. փոքր մարդը շնորհք է։

Մեխեր ժողովելը լեզուներ են։

Մեծահասակ իրան տեսնելը՝ փառք է։

Մեծ փակեղ ասուդ ձգելը՝ շնորհք է։

Մեռել.—իրան մեռած տեսնելը՝ շատ ապրել է. մեռելը թէ խօսի զգոյշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը՝ չփոխուել է. մեռելը գերեզմանում տեսնելը չարը կ'խափանուի. շատ մեռելներ տեսնելը՝ թշնամիներդ կ'յարձակուեն. Մե

Մեղր ուտելը՝ սրտնեղութիւն է։ Մետաքս տեսնելը՝ օգուտ է։

Միս տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը՝ շա

Միրգ ուտելը՝ հիւանդութիւն է։

Մոմը վառած՝ ուրախութիւն և որդի

Մորեխը՝ հոգս է և աշխարհի վնա

Մութը՝ վնաս է և չար։
Մուկը՝ նոյն է։
Մորուքով իրան տեսնելը՝ շնորհք է։

Ն. Նախիրը որ գեղը գնայ՝ պաշտօն է։
Նապաստակը՝ իրեն տղայ լինի։
Նաւ.—Նաւորդ լինելը՝ գլոյց դուրս գալ. ոսկու կամ արծաթի նաւը՝ բարի է. նաւ նստես՝ շատ կ'ապրես. նաւերի խումբ տեսնես՝ շահ կ'գայ քեզ. նաւը խանձով նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը՝ վատ է։
Նոր բան տեսնելը՝ օտարութեան կ'երթաս։
Նուռը՝ օտարներից շահուել է։
Նստել և ողբալը՝ շատ նեղութիւն է։

Շ. Շապիկ սպիտակ տեսնել կամ հագնել՝ արդարութիւն է. սևը՝ տրտմութիւն է, աղտոտը մեղք է։
Շինութիւն կառուցանելը՝ բարութիւն. անդելը՝ վնաս։
Շաքարաջուր խմելը՝ իմաստութիւն է։
Շիշ իւղով առճիկ և շահ է։
Շողը՝ փառք է։ Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն



վնաս է։ Խայտաշորեր, աւագ մարդ մեռնի։ Շորեր կորցնելը՝ վնաս է։
Շուն.—շների իրար հետ կռուիլը՝ վա- է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզ- է և չար մարդուց պէտք է զգոյշ լինել

Ո. Ոսկին կամ արծաթը՝ շահ է։
Ոսկէ խնձորը՝ պատիւ է։
Ոչխարը—ձմեռ է և ցուրտ. սև ո խարը՝ սուգ և տրտմութիւն է. ոչխար ճանապարհին հարստութիւն է։
Ողբալը՝ շատ նեղութիւն է։
Ուղտը պարոն է. երկու ուղտի կռուիլ իշխաններ կ'կռուեն. էգ ուղտ նստել հիւանդութիւն է։
Որս գնալը՝ բարի է։

Չ. Չամիչը՝ շատ վնաս է։
Չամանը՝ կռիւ և աղաղակ է։
Չանկը՝ տրտմութիւն է։
Չիրը՝ սակաւ շահ է։
Չուխա.—կանաչ չուխան՝ հարստութիւն է. սևը՝ տրտմութիւն։

Պ. Պատարագը կռիւ է։
Պարտէզ տնկելը՝ բարի է։
Պղպեղը—կսկիծ է. պղպեղ ուտելը

Թշնամիներից պատրաստ կաց։

Պնակ—արծաթի՝ հիւանդութիւն է. փչից պնակ շինելը՝ մեծ շահ է. քարից շինած պնակը՝ մեծութիւն է։

Պնակուխը՝ լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ. Ջաղաց—շինելը՝ մեծութիւն է. քանդելը՝ շինութիւն է. ջաղացի աղուոր հիւանդութիւն է։

Ջայլամը՝ նեղութիւնից կ'ազատուես։

Ջուր—սուրբ խմելը՝ լաւ է. պղտոր ջուր տեսնելը կամ խմելը՝ տրտմութիւն է. տանդ մէջ ջուր տեսնելը՝ լաւ է. ընթացող ջուրը՝ բարի է. գետից ջուր վեր առնելը՝ վնաս է. աղբիւրիցը՝ բարի է։

Ռ. Ռեհանի ծաղիկը՝ բարի է։

Ռումբ—կանգնած ռումբը՝ մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը՝ ճանապարհ է և երկիւղ։

Ռուս տեսնելը՝ մեծ հակառակութիւն է։

Ս. Սաղը՝ մեծ մարդ է։

Սագը.—սագ ուտելը հիւանդութիւն է։
Սալորը՝ առողջութիւն է։



Սամիթ.—դալարը՝ լաւ, չորը՝ վատ է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է։

Սանդր բռնելը՝ զէնք է։

Սենեակ քանդելը՝ կնոջից բաժանուիլ է։

Սեխը՝ լաւ է, ուտելը՝ հիւանդութիւն։

Սիսեռը՝ բարի է։

Սիւնը՝ նեղութիւն և կռիւ է։

Սխտորը՝ կսկիծ է։

Սոխը.—կսկիծ է. ուտելը՝ հիւանդութ.

Սուգ անելը՝ ուրախութիւն է։

Սուլուխ տեսնելը՝ գանձ է։

Սուլթան տեսնելը՝ անչափ ցաւ է։

Սիրամարգ տեսնելը՝ մեծ եղջիւր է։

Վ. Վախեցած իրան տեսնել՝ օգուտ է։

Վանք և արեղայ, նեղութիւն է։

Վառած. մէկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդ.—կին կ'առնես. վարդ քաղելը բարի է։

Վերմակը՝ հարուստ կին է։

Վիշապը՝ մեծութիւն կամ վնաս է։

Տ. Տաճար զարդարած՝ բարի է։ տաճար այրելը թշնամիքդ կը կոտրի.

Տաճիկը՝ թշնամիների յարձակումն է։

Տախտը՝ մեծութիւն է։ Տախտը դիպածով՝ բարի է. տախտը, կանաչ, ցաւ է

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է։

Տառեխ-ձուկը՝ ճանապարհ է։

Տիկը՝ տրտմութիւն է։

Տիկինը՝ նոյն է։

Տղայի գիրկն առնելը, ցաւ է։

Տուն—շինելը՝ շատ բարի է. տուն քանդելը՝ վատ է. իր կամ ուրիշի տունը քանդուած տեսնելը՝ անիրաւութիւն է

Ց. Ցեցը—լեզու է. ցեց հանելը՝ նեղութիւն կամ լաւ է։

Ցեխը՝ վնաս և տրտմութիւն է։

Ցորեանը՝ ցնորք է։

Ցուլ բռնելը՝ լաւ է։

Փ. Փայտը, շատ բարի է։



Փոխինձ ուտելը՝ զէնք է։

Փող ածելը՝ մեծութիւն և բաղդաւորութիւն է։ Մարդուց փող առնելը՝ շահ իսկ եթէ կինն փող՝ առնի տղայ ունենայ։

Փուշ կտրելը՝ թշնամիներին կորուստ է։

Փոքր մարդը՝ շնորհք է։

Ք. Քաղաք մտնելը՝ բարի է։

Քաղցր բան ուտելը՝ լաւ չէ։

Քար ձգելը՝ վնաս է. քար ժողովելը՝ ցաւ է. քարից հիմք ձգելը՝ թշնամի է։

Քարի վրայ նստելը՝ մտածմունք է։

Քացախ խմելը՝ չարը կ՚խափանուի։

Քղամիտ հագնելը՝ խնդութիւն է։

Քահանայից խաչ առնելը՝ վիշտ է։

Քող տեսնելը ճանապարհ է ցոյց տալիս։

Օ. Օձը.—թէ հետդ խօսի, այնպիսի բան կ՚անես որ բոլոր աշխարհը կ՚զարմանայ. օձ թէ սպանես՝ թշնամուդ կյաղթես. մահճիդ վրայ եթէ օձ տեսնես

կին կ'առնես. օձը թէ խայթէ՝ թշնա-
միներից վնաս գայ. օձը թէ վրադ յա-
ձակուի թշնամիներից ահ գայ. օձը ի
փորդ մտնի՝ թշնամիներդ կը չարախ-
սեն. օձին անկողնում սպանելը՝ կին
կ'մեռնի. օձ տեսնես և չվախես՝ թշնա-
միներիցդ անհոգ կաց. օձը տանդ մ
տեսնես, կինդ կը թշնամանայ. օձին ի
երկու կտոր անես՝ թշնամուցդ շ
կ'գայ։

Օղի խմելը՝ ուրախութիւն է։

Օշինդր տեսնել կամ խմել՝ կաւ է։

# ԵՐԱԶԱՑՈՅՑ ԼՈՒՍՆԻ

Ըստ Գողոմջեանեան տախտակի *)

—

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—Երազն ի բարին կատ.
» 2, 10, 12, 16, 28—Երազն երեք օրն կատարի։
» 8—Երազն ութ օրն կատարի։
» 23—Երազն երեսուն օրն կատ.
» 14—Երազն քառաս. օրն կատ.
» 11, 15, 17—Երազն օրն կատ.
» 6 –Երազն ի տարին կատարի։
» 29—Երազն լաւ է։
4, 7, 20, 21, 24, 25, 27—Երազըն սուտ է։

*) Ի հնումն երազների գուշակութեանը թէ միայն ազէտ ամբոխն էր հաւատում, այլ և այն ժամանակուայ գիտնական ուսումնականները և աստղագուշակրը (աստրօլօգ), որովհետև կարծում ն որ երազ տեսնելը կախուած է աստղայ եղանակներից, որոշ օրերից և անոյ՝ ինչպէս շարժողութիւնից, այնպէս էլ նրա ազդեցութիւնից։
Այդ հիման վրայ և հնարուած է վե-

## մարդու մարմնի խաղերի մասին

---

Գագաթը երբ խաղայ՝ բարի է, մենքից ահրուի, իշխաններից պատո ճանապարհորդի, շահի և ուրախանո

Գաղտն՝ մեծութեան նշան է, ճանապարհ գնալ և ուրախանալ։

Գլխի վերի կողմը՝ պատիւ է և հոգ

Գլխի ամբողջ խաղալը՝ շատ բարի կորուստ կ'ունենայ, գաղտնիք տես և լսի։

Ճակատը՝ շատերից պատուի, գա տնի և մեծ փառքի հասնի։

Քներակն աջը՝ ցաւից ազատուի, կ նանց պատճառաւ հոգս քաշի և վնաս

Ձախ քներակն՝ լուութիւն շնորհք պատիւ է կամ մարդու հետ կռուի։

Յօնքն աջը՝ կորուստը գտնի և սրտ թեթեւութիւն լինի.—Ձախը՝ լուութի

---

բոլիշեայ Գողոմջոսեան երաւացո ադիւսակը, որը գետեղումենք այստե օրպէս ի հետաքրքրութիւն ընթերցո ներեդ։ Ծանօթ. Աշխատասիրող



կեանքի երկարութիւն շահի կամ տկարանայ.—յօնքի մէջը՝ նեղութեան համբաւ լսի, անկարգ բանի հանդիպի։ սրտմի և վիրաւորուի։

Աչքը—աջ աղբիւրն՝ սրտնեղութիւն, սրտմութիւն է, բայց բարի լինի՝ թշնամու հետ կռուի, վէրք կամ լաց է.—ձախ աչքի աղբիւրն՝ բարի և առողջութիւն, հեռաւորին տեսնի և սրտնեղի. աջ աչքի յետի աղբիւրը շատ բարի է, հեռաւորին տեսնի խնդայ.—ձախ աչքի աղբիւրն՝ հարստութեան և մեծութեան հանդիպի, ազգականներին տեսնի և խնդայ.—աջ աչքի վերի կոպը՝ հարստութիւն է, ցնծաց կամ սրտնեղի, արտասուի, բայց շուտ ազատուի.—ձախ աչքի կոպը՝ առելութիւն և լաց է. յետոյ բարի և ուրախութիւն.—աջ աչքի ներքևի կոպն՝ հեռու ճանապարհ գնայ, հեռաւորին տեսնէ, բարի և խնդութիւն է.—ձախ աչքի կոպն՝ ցնծայ, ցանկացածին հասնի.—աչքի աջ պտուղը՝ սրտնեղութիւն է.—ձախ աչքի պտուղը՝ բարի

է.—աչքը ողջ խաղալ (աջ) բարի է, առողջանալ. հեռաւորն գալ.—ձախ աչքն ողջ՝ շատ բարի է, գանձ գտնել, սրտնեղել և զայրանալ.—աջ աչքը կոպերով՝ հեռաւոր տեսնել.-ձախը՝ հիւանդանալ, բայց ապրել։

Արտեւանունքն աջը և վերինը՝ հեռաւորն գալ, տրտմել և իր կամքը կատարել.—ձախը՝ խնդալ և առողջութիւն գտնել.—աջ ներքեւի արտեւանունքը՝ լաց և սրտնեղութիւն է.—ձախը՝ սրտնեղութիւն է, բայց հեռաւորը գալ։

Ականատակն՝ մեծ մարդկերից պատուել։

Քիթն՝ աջը, քիչ հիւանդանալ, նեղութիւնից ազատուել, կռուել.—ձախը՝ բարի որդի ,լինել և թշնամիներին յաղթել։

Քթի ամեն մասերը՝ մեծերից շահ է։

Քթի ծայրը, պարտքից ազատուել, վշտանալ կամ մարդու հետ կռուել։

Քթափողը՝ մարդու հետ սիրահարուել կամ պարտքից ազատուել։

Քթի օղը՝ հարստանալ.—երկու պինչը՝ հարստանալ, կամ սրտակիցն վնասուել։

Այտն աջ, տրտմել, հիւանդանալ և առողջանալ.—ձախը՝ որդի լինել սըրտ-



նեղի, խնդալ և հարստանալ։

Երեսն աջ, գանձ գտնել և առողջութիւն է.—ձախը տրտմել, տկարանալ, վէրք ստանալ և կեանքը կարճ լինել։

Ականջն աջը—համբաւ լսել, խնդալ, տկարանալ և ազգականը մեռնել.-ձախը հեռաւորը գալ և առողջութիւն է։

Շրթունքի երկու կողմը՝ բամբասանք լսել և տրտմել. ներքեւի և վերեւի՝ մասերը երբ խաղա իր սիրելիին համբուրել։

Շրթունքները՝ բարի է, գումար ստանալ։

Վիզն աջ՝ հեռու տեղից շահ գալ, բան գտնել, հարստանալ.—ձախը խնդալ, հարստանալ և բամբասանք լսել. ամբողջ վիզը նեղութիւն, տունն այրուել և վիզը սրով կտրուել։

Թիկնամէջն աջը հարստանալ, բայց սրտնեղել.—ձախը՝ այն բանը կ՛անես որ պատիւ չէ։

Թիկունքը, յորդայթէ պատրաստ կաց։

Արմունկն—աջը սէր է, պաշտօն ստանալ, գլուխը ցաւել, տրտմել, հիւանդանալ և Աստուծով շուտով առողջանալ.—ձախը ցնծութիւն է, հիւր գնալ; վիրաւորուել և հիւանդանալ։

Թագուկն աջը, համբոյր է, ցնծալ և հարստանալ.- ձախը, բարի և շատ լինի, մարդկանցից պատիւ ու գանձ գտնի։

Թեն աջը ցաւի և նեղութեան հանդիպի.—ձախը վշտանալ։

Քեռն աջը եթէ ողջ խաղալ, մեծերից պատուի, հարստանալ և ցնծալ, կամ դժբաղդութիւն պատահի, զգուշ կաց.—ձախը բարի է, թագաւորից պարգև ստանալ, խնդա և հարստանալ։

Մատները աջ ձեռքի կ'որոտի, վերջը կհանդարտուի—ձախ ձեռքինը պատիւ է։

Ուսն աջը՝ առողջութեան նշան է և նոր շորեր հագնի.—ձախը խնդալ և մարդկանցից պատիւ ու պարգև ստանալ։

Ծիծն աջը ուրախանալ.—ձախը հեռաւոր տեսնի, ընտանիքով խնդալ։

Կուրծքը խնդութիւն, բարի համբաւ՝ հարստութիւն և սէր է.— աջը բարի է՝ չարից ազատուի, անկարգ գործի պատ, ճառով զղջալ.—ձախը, ամենքը կսիրեն և չարից կ'ազատուես։

Սիրտը սրտի նեղանալ է և տրտմութիւն.—աջը իր սիրելիքը շատանան և ուրախանան.—ձախը տրտմութիւն է։



Ողն պտակուի, զաւակ կ'ծնի և մեծութեան կ'հասնի.—ողի մէջը՝ բարի է։

Կողն աջը մեծութիւն է, պտակուի, բարի է և ցնծութիւն ինչ էլ խնդրես Աստուածանից կ'տայ.—ձախը զաւակ ծնի և սիրտդ հանգստանայ։

Փորը տրտմութիւն ու հարստութիւն։

Ծունկն աջը վէճ է մեծութիւն և պատիւ.—ձախը վատ զրոյց լսի։

Սրունքն աջը հարստութիւն է, ահը կ'անցնի. ձախը հարստութիւն.

Անդամներն—աջը բարի, խնդութիւն, վախենալ և տրտմութիւն է.—ձախը բարի է և ուրախութիւն, բամբասուի և հետը թշնամանան։

Կօճր—աջը սիրելի մարդ կ'մեռնի և տրտմի.—ձախը վրան կ'խօսեն, բարի և ուրախութիւն է.—կօճի ներսը, բարի է և ուրախութիւն։

Ներբանը—աջը ճանապարհորդի, վախենալ, յետոյ բարի, և տրտմութիւնից ազատվի.-ձախը բանն աջողի և գտնուի։

Թաթն—աջ ոտի, ուրախութիւն է և ճանապարհ գնալ.—ձախ ոտինը գանձ, բարի է և հարստանալ։ Ողջ թաթն—

տրտմի իր ազգականից, ճանապարհ գնալ և իշխանութիւն ստանալ.—ձախ թաթն, ազգականներից հեռանալ, տըկարանալ, ապրի և հարստանալ:

Ոտի մատերը—աջու բոլոր հինգ մատերը՝ ճանապարհ գնալ, բարի լինել, ցնծալ, պարգև ստանալ.—ձախինը դատաստան, նեղութիւն, վէրք է և աղքատանալ:

Ճկոյթը ոտի—աջը, մեծութիւն, և հարստութիւն,է կամքը կատարի կամ բան կորցնի.—ձախը տրտմի մեծիցը, սիրելիների մէջ աղմուկ, գանձ և առողջութիւն գտնի:

Բութը ոտի—աջը ուրախանալ, հեռաւորն գալ, հարստանալ.—ձախը առողջութիւն է, հեռաւոր տեսնի և սաստիկ հիւանդանալ:

Ճկոյթը ձեռքի—աջը, գանձ, հարստութիւն է, և զրպարտութիւն.—ձախը ջէճ է և աղմուկ. կ՚բամբասեն, և կ՚ուրախանայ:

Ձեռքը ողջ—աջը տրտմի բայց յետոյ իրար կ՚հանգստանայ, չարը հեռանայ.—ձախը, գանձի և պատուի հանդիպի.



Թուշը աջը թշնամիներից պատրաստ կաց. ձախը—բարութիւն է.

Դգակը—աջը կռիւ է, տկարանալ, Աստուծով ազատուի.—ձախը հեռաւորը գալ, ճանապարհ գնալ, առողջանալ և ցնծալ:

Երեսը—աջը առողջութիւն և գանձ է.—ձախը տրտմի, տկարանալ, (զգոյշ պէտի լինել) և շուտով կ՚մխասուի:

---

*) Թէև երազահանների և սրանց նման հրատարակութիւններն անօգուտ և աննպատակայարմար են տպագրութեան, բայց գաւառական մեր մի քանի գործակալների անընդհատ պահանջին զոհացում տալու համար, որպէս զի ընթերցանութեան գործը չը վնասուի և գաւառական ընթերցող հասարակութիւնը չզրկուի օրացոյցների միւս մասերում զետեղուած օգտակար նիւթերից, ուստի հակառակ մեր ցանկութեան, հրատարակում ենք այս „Նիկատար երազահանը“ (աշխարհաբարի վերածած և որոշ կերպիւ դասաւորուած), վերապահելով մեզ միայն նրա արտատպելու իրաւունքը: Ն. Ա.

# ԲԱՂԴԱԳՐՈՒՑԱԿ *)



*) Հետևեալ VI բաժանմունքների հարցերից ամեն մէկը, ցանկացողներն իրանց մտքումը պահում են և դնդակը գցում են վերը նշանակուած շրջանի մէջտեղը։ Իսկ պատասխանը պէտք է գնդակի տակի թւերի մէջ փնտռել։



## I Բաղդաւոր կը լինիմ արդե՞օք

—

1. Այո, կը լինես, բայց ծոյլ ես։
2. Որ չես աշխատում՝ ինչ կը լինես։
3. Եթէ առաւօտները վաղ զարթնես
4. Գործիդ ալի եղիր միայն:
5 Եթէ այդ ուրիշին ես ցանկ անում։
6. Խնայողութիւն չունես։
7. Այնպէս չես վարւում՝ որ լինես։
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես
9. Ողջկերանցով՝ ձեր ժամանակը։
10. Ամենքի հետ չես վարւում, կոչն
է տեսա, այդպէս մի շարունակի։
11. Բաղդդ բնաւորութեան մէջն է։
12. Խոնարհութեամբ միայն կարող ես
բախտաւոր լինել։

## II. Յաջողութիւն կունենամ

—

1. Միայն ճարպիկ և հեռատես եղիր։
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես։
3. Եթէ ազնիւ և չափաւոր լինես,
4. Կանոնաց միջոցով ամեն բանի կը հասնես։

5. Եթէ թողնես յիմարութիւններդ։
6. Բոլորը՝ քեզանից է կախուած։
7. Միայն ամուսնացուդ հարուստ պէտք է լինի, թէ կուզ տարիքը 60-ից էլ անց։
8. Եթէ եռանդով գործես։
9. Առանց այն էլ ինքդ լաւ կաս։
10. Այնպէս, ինչպէս ինքդ ցանկանում։
11. Ցանածդ դուրս կը գայ, ծլածդ կը ծաղկի։
12. Ամեն բանում յաջողութիւն կը գտնես, բայց կանանցից կարգին տանջուելու ես։

## III. Իմ իդէալս սիրու՞մ է ինձ արդեօք

—

1. Նայիր հայելուն, տես արդեօք կարելի՞ է քեզ սիրել։
2. Սիրում է, բայց ծածկում է,
3. Չի էլ մտածում այդ մասին։
4. Բայց քեզ հետ և ուրիշներին էլ է սիրում։
5. Նայելով թէ ի՞նչ ես ընծայելու։
6. Չե՞ս ամաչում, ի՞նչ քո սիրելու ժամանակն է։
7. Սիրում է և կսիրի միայն թէ մինչև



քո կարողութեան վերջին կոպէկը։
8. Քեզ շատ սիրելուց տանջւում է։
9. Միայն քանի որ տեսնում է քեզ։
10. Շատ քիչ։
11. Սիրում է քեզ միայն երբ մէջն է պատանդ։
12 Ոչ սիրում է, ոչ ատում, այլ միանգամ միայն դուր ես գալիս։

---

## IV. Շուտ կըլինի արդեօ՞ք իմ հարսանիքը

1. Սպասէք, եթէ վերջդ չմտածես։
2. Երբ քո քէփն է, միայն զգուշացիր։
3. Ո՞ւմն ես պէտք, կամ ո՞ւմն ինչ։
4. Մինչև քեզ չապահովես։
5. Երբ բարեկամ գտնես։
6. Երբ խելօքանաս։
7. Շատ ուշ ես մտածում։
8. Որ միտք չունես՝ լաւ է մի վանք մտնես։
9. Շուտ, հէնց այս տարի, բայց չես աշխատում։
10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր։
11. Դու լաւ գիտես թէ երբ։
12. Դատարկ զբաղանով ի՛նչ հարցանում

## V. Եկող տարի ինչպէ՞ս կը լինի

—

1. Նայելով թէ դու ինչ կը լինես։
2. Լաւ, եթէ խելքդ գլխիդ պահես։
3. Եթէ առաջուց առած ունենաս վի-ճակահանութեան տոմսակ, կը տանես։
4. Ամառը շոգ՝ ձմեռը ցուրտ։
5. Հարուստների համար լաւ կը լինի։
6. Խելքիդ զոռ կը տաս, փող շատ կը ծախսես։
7. Այդ վատ բնաւորութիւնդ չես փոխեր։
8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի։
9. Ուրախ և բաղդաւոր։
10. Փողեր շատ կստանաս, շատ էլ կը ծախսես, տակը բան չի մնայ։
11. Յիմարը կաշխատի, խելօքը կուտի։
12. Ծնուածին կը մեռնին, մեռնողին կը թաղեն։

---

## VI. Երկար կապրեմ արդեօ՞ք

—

1. Ամեն բանի մէջ չափաւոր լինե-լով՝ հարիւրից կանցնես։



2. Ոչ մի կողմից քեզ չես զսպում, ինչ երկար կապրե՞ս։
3. Այնքան անգամ մէկ ու կէս, որ-քան ծնողքդ։
4. Եթէ պարտքեր չանես, իննսուն և ինը։
5. Անչափ աչքածակութիւնդ, կեանքդ կարճացնում է։
6. Ապրես՝ չապրես. ինչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշի։
7. Ինն անգամ ինը տարի, բայց ցաւից զգուշացիր։
8. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով երկար կապրես։
9. Նախանձոտ սրտովդ երկար չես ապրելու։
10. Փառասիրութիւնդ է կեանքդ կար-ճացնում։
11. Գործդ իմացիր, քեզ դեռ այդ է հարկաւոր։
12. Ջրից զգուշացիր միայն *)

---

*) Այս բաղդագուշակը զետեղում ենք որպէս պարապ ժամանակի խաղ՝ մեր ընթերցողների համար. Ծան. Աշխ.

## ԴԻՄԱԳՈՒՇԱԿ

Զանազան դարերում գիտնականները և փիլիսոփաները դիմագուշակութեանը մեծ նշանակութիւն են տուել, Նրքա, մարդուս բարոյական արժանաւորութիւնները այդ գիտութեամբ էին որոշում, և այն ժամանակ այդ բացատրում էին նրանով, որ երեւի գծագրութիւնն է որ իբր հանդիսանում է միջնորդ մարդու ներքինի և արտաքինի մէջ։

Այսպէս էին այն գիտնականների կարծիքը, որոնց թւում անպայման պատկանում էին, Վօլֆը, Հէլլէրը, Սկալիգէրը, Դէկարտը, Մոնտօնը և նշանաւոր բնագէտ Բիւֆոնը։

Դիմագուշակութեան գիտութիւնը մարդկային կեանքին ժամանակակից է, այն պատճառով որ մարդիկ իրար հետ որև է յարաբերութիւն սկսելիս, չէին կարող սրիշ կերպ քննել և միմեանց հասկանալ, եթէ ոչ արտաքինով, տեսքով և գծագրութեամբ։ Եւ շատ պատճառներով, այդ բնական է թւում, երբ հենց ներկայումս էլ երեսի գծագրութեամբ այնպիսի գործեր են վճռվում որ մեր կեանքում մեծ դեր



են խաղում, օրինակ ինչպէս պսակն և այլն։ Դէմքի գծագրութեամբ և հայացքով է որ քննում են մարդուն, որոշում հիւանդին և նրա հիւանդութիւնը, Գծագրութեամբ յայտնվում է մարդու բարի, չար և զայրացկոտ լինելը. Մի խօսքով մարդու հենց մի հասարակ բարեձև տեսքը և քաղցրանկատ հայացքը, մինչև անգամ ամենահասարակ մարդու աչքում մեծ դեր է կատարում և այնպիսի տպաւորութիւն անում, որ գրաւում է նրա սէրը և համակրութիւնը։

Ի հարկէ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև անձնական տեսակցութեամբ և իր ներկայութեամբ մարդը աւելի շուտ և մօտ է ճանաչվում, քան թէ նրա խօսքը և հեռուից առացած նրա գրութիւնը։ Մարդ ամեն բանում կարող է խաբել, բայց նրա երեսը չի կարող մի անգամից այնպէս փոխուել. որ խաբի։ Եւ ճշմարիտ, ով կարող է ներս մտնել մարդու հոգու խորքը կամ շօշափել նրա ուղեղը, թէ ինչ է գտնվում մարդու գանգի մէջ։

Ինչը կարող է թափանցել այն զգացմունքների անդունդը, հասկանալու

համար այն հակումները և կրքերը, որոնցով լի են մարդու գլխի ներսակողմը։ Աչքերի և ականջի շնորհիվն է, որ լոյսի և ձայնի հրաշալիքները գաղտնագողի մտնելով մեր գլուխը, տալիս են մեր խելքին բաւականութիւն։

Դիմագուշակութեան գլխաւոր կանոնը, հիմնուած է հոգեկան դրութեամբ տեղի ունեցող զգացմունքներ և անցնող և մարմնի և երեսի գծագրութեանց շարժողութիւնր արտայայտող յարձակումներով ինչպէս օրինակ հոգու խաղաղ դրութեան ժամանակ երեսը հանգիստ լինելով հասկացվում է մարդու յատկութիւնը. Մինչև անգամ ոչ թէ երեսի գծագրութիւնը, նոյն իսկ մարդու ձայնը նաև որոշում է մարդու դրութեան ու վիճակութիւնը, ինչպէս նաև նրա հոգու յատկութիւնը և այլն։ Ամենքիս հասկանալի է, որ երեսը կրքերի արտացոլացումն է, Զզուանքը, տխրութիւնը, վիշտը, անքաղաքավարութիւնը և յիմարութիւնը դնում են իրենց դրոշմը մարդու ճակատին։ Հենց երբ նկատում ենք որ մարդ իր ճակատը խոժոռելով, յօնքերը կիտելով,



դէմքը խոժոռեց, դրանից հասկացւում է որ զգացմունքը անցնում է կամքին, և մենք զգում ենք, որ մարդուն անհաճոյ է տեղի ունեցած խոսակցութիւնը և թէ առաջարկած խնդիրը մնալու է անկատար։

Ահա հոգու այս ժամանակաւոր հակումները, մարմնի շարժողութեամբ միշտապէս դնում են իրանց կնիքը մարդու երեսին։ Եւ այդ վատ հակումները սրտի խորքից վեր են սկսվում մի մասով երեսի գծագրութիւնը, որը յաճախ անցնում է սերնդից սերունդ։ Հենց այս հանգամանքներից է կախուած այն փոփոխութիւնները, որը յաճախ ոչընչացնում է գեղեցկութիւնը մարդկանցից. արբեցողութեան, զզուանքի, խանդոտութեան ինքնասիրութեան և տխրութեան ազդեցութեամբ։

Ահա և այդ յայտնի փիլիսոփաների գուշակութեանց տեսակէտը։

ՃԱԿԱՏԸ

Ճակատի լայնութիւնը — նշան է այնպիսի խելքի, որ կարող է ընդգրկել շատ առարկաներ։

Կարճ ու սեղմուած ճակատը —

հաստատ բնաւորութեան նշան է։
Համա Կարճ ճակատը ըստ Բիւֆոնի
րոն մարդուս յամառ, ագահ, և մաքրասէ[ր]
ու շատակեր լինելն է ցոյց տալիս։

Լայն ու մեծ ճակատը ընդհան[ուր] բոլէս արտաքին ազդեցութիւններ[ի] դանդաղ տպաւորուելուն ու անհասկացողութիւնն է արտայայտում։

Տափակ ճակատը առհասարակ ինքնահաւան լինելն է ցոյց տալիս։

Ճակատի վերին կողմն ուղղուած երբեմն էլ հետքերի նման գծեր թողնող կնճիռները՝ խելացիութեան[։]

Ուռուած, քնքուշ մորթ ունեցող ճակատը՝ ցոյց է տալիս տէրոջ քաղաքավարի, հաճոյական ու զուարճասէր բնաւորութեան տէր լինելը։

Դարուփոս, անհարթ ու մորթով ծածկուած ճակատը ստախօս, խորամանկ, ու դաւաճանող լինելն է ցոյց տալիս։

## ՅՕՆՔԵՐԸ

Հորիզոնական դրութեամբ ուղիղ գծով տարածուող յօնքերը այրական բնաւորութիւնն են արտայայտում։

Անկանոն դրութեամբ ու անկանո[ն]



գծերով յօնքերը՝ բնաւորութեան կոշտութիւնն են ցոյց տալիս։

Թանձր յօնքերն ու ուղիղ յօնամազերը—Ողջախոհութիւն, ճշմարտախօսութիւն ու խոհեմութիւն։

Աչքերին շատ մօտ դասաւորուած յօնքերը—Հաստատուն ու զննող բնաւորութիւն։

Շէկ յօնքերը—Թուլութիւն։ Նօսրը—Թեթեւամտութիւն, երբեմն և խորամանկութիւն։ Թուխը—Եռանդ։

## ԱՉՔԵՐԸ

Ով գող է իւր վիճակից, ո՛ւմ խիղճն մաքուր է, նրա հայեացքը միշտ հանդարտ է, մինչև անգամ համեստ, և հոգու անդորրութիւնն է արտայայտում։

Կապոյտ աչքերը—Թուլութիւն։

Շագանակագոյնը—Հաստատ բնաւորութիւն։

Սևը—Կորովամտութիւն։

Մոխրագոյնը—Խորամանկ ու յողդողդ բնաւորութիւն։

Բացկապոյտը—Դանդաղ լինելն։

Խոշորը—Ծոյլի ու շատակերի։

Վառվռունը—Այրական, աներկիւղ ու հնարագէտ բնաւորութեան և

Հայհոյիչ լինելու։

Նուռ շուտ աչքերը թարթողը կամ աչքացաւ ունի, կամ երկչոտ է։

Այն մարդը, որի աչքերը յաճախ դէպի գետինն են բեւեռուած՝ մտածող ու աշխատասէր է։

## ԲԵՐԱՆՆ ու ՇՐԹՈՒՆՔԸ

Սեղմ բերանը ցոյց է տալիս կարգապահութիւն, մաքրասիրութիւն, գործունէութիւն, ու ճշդութիւն։

Բաց բերանը—Մելամաղձոտութիւն։

Փակ բերանը Համբերատարութիւն։

Լայն բերանը յիմարութեան նշան է, եթէ վեր է բարձրացած դէպի ռունգները, և ագահութեան՝ եթէ սեղմած է։

Փոքրիկ. Նուրբ բերանը, համապատասխան փոքրիկ ճակատին ու քթին —Թոյլ ու երկչոտ բնաւորութեան։

Հաստ շրթունքները հեշտասիրութեան ու որկրամոլութեան։

Ստորին շրթան վերայ եղած փոսիկը՝ ուրախ բնաւորութեան նշան է։

Այն մարդը, որի խօսելու ժամանակ շրթունքների մի ծայրը վերև ու մի կողմն է բարձրանում, արհամարհող ու անզգայ բնաւորութեան տէր է։



## ՔԻԹՆ ու ՌՈՒՆԳՆԵՐԸ

Արմատի մօտ կորացած քիթը—Հրամայող ու խստաբարոյ լինելու նշան է։

Ճակատի հետ ուղիղ գծով միացող քիթը—Հեզ բնաւորութիւն։

Շրթունքի վերայ կորացած քիթը—Չար, անզգայ ու նենգամիտ լինելը։

Վեր բարձրացած քիթը՝ բարձր ճակատի տակ—Կոպիտ ու բարկացկոտ։

Հարթ և ուղիղ քիթը՝ առանց ատելի գծերի, ոչինչ առանձին ընդունակութիւն չէ ցոյց տալիս։

Փոքրիկ ռունգները—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կանոնաւոր զարգացած ռունգները—Հեշտասիրութիւն և քնքշութիւն։

Այս ու այն կողմն ուղղուած ռունգները—Բարկացկոտի ու կրքոտի նշան է։

## ԿԶԱԿՆ ու ԱՅՏԵՐԸ

Սուր կզակը—Խորամանկութիւն ու խելամտութիւն։

Տափակ կզակը—Մտածողութիւն։

Գէր կլորակի կզակը—Շատակերութիւն ու զգայնութիւն։

Փոքրիկ, կարճ կզակը—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կլոր, փոսաւոր կզակը—
բնաւորութիւն։

Երկու կէս եղածի պէս կզ
Զգոյշ և խոհեմ լինելը։

Զոր ու կուճ եկած այտերը—Ան
մաղձոտութիւն։

Գէր ու մսոտ այտերը—Մագ
յին բնաւորութիւն ու կոպիտ միտա

## ԱԿԱՆՋՆԵՐԸ

Մեծ ականջները—Անքաղաքա
րութիւն ու ժլատութիւն։

Փոքր ականջները—Խոհեմանկա
ու խելք։

Հաստ ականջները—Պարոնութի

Բարակ, Թափանցիկ ակա
ները—Պատուականութիւն։

## ՄԱԶԵՐԸ

Սև ու խիտ մազերը, որոնք
ալօրուամ քիչ խելք՝ բայց աշխատա
րութեան ու կարգապահութեան նշա

Երկայն, հարթ մազերը—Բա
բնաւորութիւն։

Խարտեաշ մազերը—քնքշութի

Սև ու նուրբ, ոլորկ և փայլուն մա
զերը չարութեան նշան են, մանաւանդ
երբ նրանց գոյնը յոնքերի գոյնից է



## ՄԱՏՆԵՐԸ

...եծ մատը—առաջի յօդը, ցոյց է տա-
կամքի տէր լինելը, երկրորդը—
...տողութիւն, երրորդը սէր։

...աջի—մատը (լուսնթագի մատը)
...երկար է, գոռոզութեան և խը-
...ողութիւն է ցոյց տալիս. եթէ սը-
...ծայր է.—սրամիտ հասկացողութիւն,
...է քառանկիւնի,—ճշմարտասիրու-
...ւն. եթէ վերջումը լայնացրած է
...թակի նման),—եռանդուն գործու-
...ութիւն։

Երկրորդ մատը—(Կռոնոսի մատը)
...ծայրը,—ունայնամտութիւն քա-
...նկիւնաձևը,—զգուշութիւն, թիակա-
...ձևը,—գործունէութիւն։

...րրորդ մատը—(Փայլածուի մատը)
...ծայրը,—նկարչական ձիրք. քառան-
...կիւնաձևը—ճշմարտութիւն, քննադա-
...տողութիւն, թիականմանը, թատերա-
...ն տաղանդ։

...րրորդ մատը—սրածայրը,—պերճա-
...ութիւն, քառանկիւնաձևը—քննա-
...ական հաւատարմութիւն։

ԲԱՂԴԱՒՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԱՑ

Ֆրանսիական մի քանի գիտնակա տախտակների կարծիքով՝ ամուսնութ համար գոյութիւն ունին թէ բաղդ և թէ անբաղդ օրեր։ Նրանց գիտ թիւնների համաձայն, ամենից ա բաղդաւոր և հաճելի օրեր պէտք է մարել՝

| | |
|---|---|
| Յունուարի | 1, 3, 10, 19 և 21. |
| Փետրուարի | 3, 10, 19 » 21. |
| Մարտի | 3, 5, 12, 20 » 23. |
| Ապրիլի | 2, 4, 12, 20 » 22. |
| Մայիսի | 2, 4, 12, 20 » 23. |
| Յունիսի | 1, 3, 11՝ 13 19 և |
| Յուլիսի | 1, 3, 12, 19 և 21. |
| Օգոստոսի | 2, 11, 18, 20 և 30 |
| Սեպտեմբերի | 1, 9, 16, 23 և 28 |
| Հոկտեմբերի | 1, 8, 16 18 27 և 2 |
| Նոյեմբերի | 5, 11, 13, 22 և 25. |
| Դեկտեմբերի | 1, 8, 11, 16, 23 և |



# XIV. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երիզորդը—տափակ ճիճուն (солитеръ), կլոր ճիճուն (аскариды), գլխի չոր ու թաց քաչալը, գլխի մազեր, ոտքի կոշտեր (мазолы), էկզեմա, քոր և քոս հիւանդութիւնները արմատապէս և միանգամից բժշկուելու համար, խորհրդով կարելի է դիմել ամեն օր առաւօտեան մինչև ժամը ինը—ճաշից յետոյ 3-ից—6 ժամը հետևեալ հասցէով, Թիֆլիս. Գաբայեվսկի № 5. Մակար Չմշկեանին—Тифлисъ II уч. Габаевск. № 5, Макару Чимишкіану.

Իսկ Նամակով դիմած դէպքում, պատասխանի համար պէտք է ուղարկել քսան կոպէկի փոստի մարքայ, հակառակ դէպքում նամակի պատասխանը անհետևանք է թողնվում։

1868 թ. սկսած հաւաքած ունեմ քան հազարից աւելի հայերէն

# ԱՌԱԾՆԵՐ

որոնք պատրաստում եմ տպագրութեան տալու: Եւ որպէս զի ժողովածուս ա-ւելի հարուստ ու լիակատար լինի, ուս-տի դիմում եմ հետաքրքրվող անձանց... եթէ ցանկանան կարող են ուղա[րկել] չտպագրուած առածներից, մանաւանդ գաւառական բարբառներով, որոնցից եթէ մտած չեն լինի մեր հաւաքածուի մէջ, կը տպագրենք ուղարկողի անունը յիշելով: Իսկ եթէ առածների թիւը հա-րիւրից անց լինի, տպագրուած օրինա-կից մի-մի օրինակ էլ նուէր կուղար-կենք:

Հասցէն. Թիֆլիս՝ Մակ. Զմշկեան:

Բ) ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ

Ապրիլ 3.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհւոյ Աղեքսանդրայ Ֆէօ-դորովնայի:

Մայիսի 6.—Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի:

Մայիսի 14.—Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի և Աղեքսանդրայ Ֆէօդորովնայի:

...ա 25 Ծն. Ն. Կ. Մ. Թագուհի-Կայ-[սր]հւոյ Աղեքսանդրայ Ֆէօդորովնայի:

... 22.—Անուանուն. Ն. Կ. Մ. Մայր [Կայս]րուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի:

... 30.—Ծնունդ Ն. Կ. Մ. Թագա-[ժառ]անգ Կայսր Ալեքսէի Նիկոլայեվիչի:

Օգոստ. 25.—Յիշատակ Նուաճման [Ա]րեւելեան Կովկասու:

Հոկտ. 5.—Անուանակ. Ն. Կ. Մ. Թա-գաժառանգ Կայսր Ալեքսէի Նիկոլա-[յեւ]իչի:

Հոկտ. 21.—Գահակալութիւն Ն. Կ. Մ.—Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի:

Նոյեմբերի 14.—Ծն. Ն. Կ. Մ. Մայր Թ. [Կա]յսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի:

[Դ]եկտ. 6.—Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսր Նիկոլայ Աղեքսանդրովչի

«Մշակի», «Աղբիւրի» և ռուսերէն լեզուով „Армянскій Календарь съ пр… сказаніями" օրացոյցները (երկու… …ին) ճանապարհածախքով

80 կոպէկ։

Վաճառւում են Թիֆլիսի յայ… գրավաճառանոցներում և բոլոր Թեր… Թեղէնների խանութներում։ Մեծ ք… նակութեամբ գնողները աւելի զիջո… ստանալու համար՝ ուղղակի դիմում… մեզ։

Օրացոյցների մէջ տպագրւում է… …տարարութիւնները զանազան լեզու… րով, ամենաչափաւոր գնով։ Ցանկացող… ները դիմում են հետեւեալ հասց… Թիֆլիս՝ Մակար Չմշկեանին։ Макару Чимишкяну. Tiflis, Mak… michkian.

Գինն է 20 կ

6734

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032318